№ 285 ՈՒՐԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29 № 285

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ"

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., յունվար և փետրվար ամիսներինը միասին՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնը)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կիրակի դեկտեմբերի 31-ին

Վանքի մայր եկեղեցում պատարագից յետոյ

կը կատարվի

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍԿ. ՍԵԴՐԱԿԵԱՆԻ

Թաղման քառասունքը

Պարսից գեներալ-հիւպատոս Մօֆախամօս-Սուլթանը խորին վշտով յայտնում է, որ Պարսկաստանի գլխին մեծ քամբախտութիւն եկաւ. Նորին Կայսերական Մեծութիւն, Իրանի օգոստափառ Պետը,

ՄՈՒԶԱՖՖԷՐԷԴԴԻՆ ՇԱՀԸ,

դեկտեմբերի 26-ին, երեկոյեան վախճանվեց։ Սոյն դեկտեմբերի 29-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Շիաների մէջիդում, որ գտնվում է 6-րդ Թաղամասում, կը կատարվի հոգեհանգիստ, որին ներկայ կը լինի սգի պաշտօնական զգեստով գեներալ-հիւպատոսը գեներալ հիւպատոսարանի պաշտօնեաների հետ։ 1—1

Թիֆլիսի գործակատարների փոխադարձ Ընկերութեան Վարչութիւնը

խնդրում է ընկերութեան պ.պ. անդամներին շնորհ բերել ընկերութեան գրասենեակը (Гановская ул. № 11) ուրբաթ, դեկտեմբերի 29-ին, 1906 թ. երեկոյեան $6^{1}/_{2}$ ժամին

ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Ընտրելու հոգաբարձական խորհուրդ՝ բաղկացած մի նախագահից և 5 անդամից, ընկերութեան նոր բացվելիք առևտրական դասընթացքների համար։ առ. 1—1

ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՆԵԼ

Թիֆլիսի կենտրօնական Նպաստամատոյց Յանձնաժողովը յայտարարում է, որ կրկին ստացված է

„ԳԵՂՋՈՒՆԻ"

Զուտ արդիւնքը յատկացրված է յօգուտ հայ տառապեալների։ Ցանկացողները ստանալ այդ պատկերազարդ և շքեղ հատորը, որ գեղեցիկ ամենալաւ զարդն է և գեղարուեստական մեծ հաճոյք է պատճառում, և մօտեցող տօների առիթով լաւագոյն նուէր կարող է հանդիսանալ, թող շտապեն ուղարկել 4 ր. և ճանապարհածախսի համար 40 կ., ընդամենը 4 ր. 40 կոպ., «Մշակի» խմբագրատունը, «Գուտտենբերգ» գրավաճառանոցը և կամ «Երկիր» լրագրի խմբագրատունը։ 5—10

Բացված է բաժանորդագրութիւն

ՀԱՅԵԼԻ

Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որը երբեմնապէս լոյս կը տեսնի «Հայելիի յաւելուած» անուան տակ։

Տարեկան բաժանորդները կը ստանան՝

1) 50 № «Հայելի»։
2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը առանձին ալբոմ կը կազմեն։
3) 2 մեծադիր գունաւոր պատկեր հայկական կեանքից (50×60 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատկական համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին)։
4) 1 պատի տախտակ պատկերազարդ Օրացոյց 1908 թ.։
5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական նկարը։

Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից նոյեմբեր։

Տարեկան գինը պլեմբաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 ռուբ.։ Կէս տարին՝ 2 ր., դուրսը՝ 2 ր. 50 կոպ.։ Երեք ամիսը՝ 1 ր., դուրսը 1 ր. 25 կ.։ Արտասահման՝ տարեկան 6 ռուբլի, կէս տարին 3 ռուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3. կամ Tiflis, Rédaction du journal «Haeli».

Խմբագիր-հրատարակիչ՝ Բ. Ճէպէյեան

(ա. օ.) առ. 10—10

ԲԱՑՎԱԾ Է ՆԱՂԴ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

ԽԱԹԱԲԱԼԱ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

Տարեկան գինն է՝	Թիֆլիսում	4 ր.	Ուրիշ	տեղեր՝	5 ր.։
Կէս տարվայ	»	»	2 ր.	»	»	2 ր. 50 կ.
3 ամսվայ	»	»	1 ր.	»	»	1 ր. 25 կ.
1 ամսվայ	»	»	— 40 կ.	»	»	— 50 կ.

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի տարեկան բաժանորդները 1907 թ-ին, բացի 50 № թերթից ՁՐԻ ստանալու են. 1) գունաւոր ՏԱԽՏԱԿ-ՕՐԱՑՈՅՑ, 2) միջադիր խիստ շքեղ պատկեր՝ զանազան գոյներով տպված, 11×8 վերշօկ մեծութեամբ, որ ծառայելու է որպէս պատից կախելու ԶԱՐԴ—ՊԱՏԿԵՐ և 3) մի «ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ», մօտ 200 միջադիր երեսներից բաղկացած, ուր մտնելու են եւրօպական և ռուսական նոր երգիծաբանական գրողների լաւագոյն գրուածքներից նմուշներ։

Ընդունում ենք ամեն լեզուներով յայտարարութիւններ։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Хатабала».

Խմբագիր-հրատարակող՝ Աստ. Երիցեան

(ու. կ. ե.) առ. 15—20

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալեքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՌՈՒԴԷՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ԵԱՆՉԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բկի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.։

Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բկի և ականջի, երկ. րեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիպնօզով ամենայն օր 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱԶԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

Բժ. Ա. Տ. ՌՕԶՄԱՐԻՆՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք. 4—5 ժ., երեք. շաբ. 3—4 ժ.։

Բժ. Ն. Ի. ՆԷՅՈՒՑՄԻՆ.—Աչքի, երկ., երեք., չոր., ուրբ., շաբ., 11—12 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՈՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ. չորեք., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.։

Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ
Բժ. Կ. Ի. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ } Կլինիքական անալիզ

Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, էլէքտր. 4—6 ժամ.

Մ. Ե. ԳՕՐՕԳՑԵՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.

Ս. ԵԱ. ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, ստնտուների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 34—144

ԼՈՒՍԱԳՈՅՆ ՏՕՆԱԿԱՆ ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

„ՀԱՍԿԵՐ"

Մանկական պատկերազարդ ամսագիր

1907 թ. տարեկան բաժանորդագինն է 4 ր., առանց մանկավարժական բաժնի 3 ր.։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аскеръ», Бебутов. 25.

առ. 4—8

„ԱՇԽԱՏԱՆՔ"

Շաբաթաթերթ

Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է բացի խմբագրատնից՝ Бебутовская, № 56. նաև հետևեալ տեղերում՝

1) «Աշխատանքի» գրասենեակում, Дворцов. ул. д. Груз. Двор. № «Խաթաբալայի» խմբագրութեան կից։
2) «Гуттенбергъ» գրավաճառանոցում։
3) պ. Մատինեանի «Փարոս» կիօսկում, Երևանեան հրապարակի վրա։

Տարեկան բաժնեգինն է 4 ռուբլի։

առ. 4—6

Եւլախի կայարանում գտնվող

Գ. ՅՈՎՀ. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆՑԻ

կոմիսիօներական գրասենեակը և ապրանքների պահեստատեղը, որոնք անցեալ տարի թուրք-հայկական ընդհարումների ժամանակ թալանվեցին (ապրանքը գրասենեակի տիրոջ սեփականութիւն էր)։

ՅՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ

ՎԵՐԱԲԱՑՎՈՒՄ Է։

(ա. օ.) 5—5

ԲԺԻՇԿ

Տ. Ա. Խաախանեան

ՄԱՍՆԱԳԷՏ

ներքին եւ վեներական հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ. / երեկոյեան 5—7 ժ.

Սոլոլակ, Սերգիեվսկայա 15, Փրիդօնովի տանը։

առ. (չ.ու.գ.) 26—100

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի ընդհանրացրէք. Մուզաֆֆերեդդին շահի վախճանվելը. Վերջին տեղեկութիւններ. Հօսանքների շփումներ. Տեղեկութիւններ խանքենդի գործակալութեան. Մամուլ. Գանձակի շրջանից. Կուսակցութիւնների և դաշնակցութիւնների շուրջը. Դպրոցներում. Դպրոցական տուրքի հարցը. Բաթումի շրջանից. Գիւղական կեանքից. Տեղեկութիւններ դաւառից. Նամակ Նոր-Բայազետից. Նամակ Գանձակից. Հասարակութեան դատաստանից. Էջմիածնի շուրջը. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՄԻ ԸՆԴՀԱՆՐԱՑՐԷՔ

I

Մի այնպիսի երկրում, ինչպէս Անդրկովկասն է, ուր միատեղ ապրում են բազմատեսակ ազգագրական տարրեր, շատ հեշտութեամբ ազգային գոյն են տալիս այնպիսի երևոյթների, որոնք այդպիսի բնաւորութիւն չը պէտք է ունենային երբէք։

Ընդհարվում են մարդիկ սովորական իրանց շահերով և կատարում են կողոպուտներ և սպանութիւններ թէ նոյն ազգութեան շրջանում, թէ մի քանի ազգերի շփման ժամանակ։

Եւ ահա այս վերջին տեսակ դէպքերում հեշտ է լինում տրամադրել մարդկանց, թէ կողոպուտը կամ սպանութիւնը կատարվել է ազգային հողի վրա, եթէ մանաւանդ որևէ շահ կամ հաշիւ կայ մի այդպիսի դաւադրական մթնոլորտ ստեղծելու համար։

Եւ անկասկած՝ կը գտնվեն մարդիկ, որոնք զոհ կը դառնան թիւրիմացութեան, իրանք էլ իրանց կողմից ույժ կը տան նրան և, փոխանակ ոչնչացնելու նրան իր սաղմի մէջ, կը բարդացնեն և կը ճիւղաւորեն՝ գրգռված դիւրահաւատութիւնից ու թեթևամտութիւնից, թէ որևէ դաւադրական դիտումներից։

II

Մենք նպատակայարմար ենք համարում մատնանշել մի քանի նոյնանման երևոյթներ։

Արևմտեան Ռուսաստանի մի քանի նահանգներում գիւղացիները մալօռուսներ են, կալուածատէրերը լեհ, իսկ վաճառականները հրէայ. կան և որոշ թւով գերմանական կոլօնիստներ։ Այդպէս է, օրինակ, Վօլընի և Պօդօլի նահանգներում։

Եւ ահա տեսէք թէ երբեմն ինչ տեսակ թիւրիմացութիւններ են ծագում։ Երբ սկսվում է գիւղական շարժում կալուածատէրերի և վաճառականների դէմ, իրապէս տեղի են ունենում ընդհարումներ մալօռուսների, լեհերի և հրէաների մէջ։ Տնտեսական շարժումը շատ շուտ վերածվում է ուրիշ տեսակ շարժման, և յաճախ շարժումը այնքան բարդանում է, որ յետոյ այլևս դժուար է լինում զատել այս ու այն ազդեցութիւնը մէկը միւսից։

Եթէ աւելացնենք դրա վրա և այն, որ լեհը կաթոլիկ է, մալօռուսը ուղղափառ, հրէան մովսիսական, գերմանացին լիւթերական, կը հասկանանք, թէ ինչու շարժումները աւելի ևս բարդանում են և նոյնիսկ կրօնական խտրութիւնների հարցեր էլ շօշափում։

III

Նոյնատեսակ դրութիւնների շատ յաճախ պատահում ենք մեր երկրում։ Օրէնակ, Գանձակի և Երևանի նահանգների գիւղացիների մէջ առաջացած մի շարժում կալուածատէրերի դէմ որոշ տեղերում պէտք է ընդհարում առաջացնէ հայ գիւղացիների և Թուրք բէգերի մէջ։ Թիֆլիսի նահանգի քաղաքներում, ուր վաճառականների մեծ մասը հայեր են, ամեն մի շարժում առևտրականների դէմ կարող է որոշ տեղերում նկատվել իբրև ընդհարում հայերի և վրացիների մէջ։

Եւ անկասկած՝ կարող են պատահել այնպիսի չարամիտներ, որոնք կօգտվեն այդպիսի տնտեսական կամ դասակարգային տարբերութիւնից առաջ բերելու ազգային ընդհարումներ։

Սակայն հէնց այդտեղից էլ ծագում է այն մեծ բարոյական պարտականութիւնը, որ պէտք է յանձն առնեն մեր կովկասեան ազգերի ինտելիգենտ ներկայացուցիչները ցրելու ամեն մի այդպիսի թիւրիմացութիւն թէ դաւադրութիւն և միահամուռ միջոցներ ձեռք առնեն ամրացնելու համերաշխութեան, համաքաղաքացիութեան և գործակցութեան գաղափարները բոլոր ազգաբնակութեան մէջ։

IV

Օտարատեացներ կան իւրաքանչիւր ազգի մէջ։ Բայց նրանց պէտք է չէզոքացնել և նրանց ասած-խօսածը թուլացնել մարդասիրութեան ու ազգերի գործակցութեան գաղափարի ուժեղ քարոզով։

Եթէ այսօր մենք պատահեցինք մի օտարազգու, որ փրփուրը բերնին խօսում է հայի դէմ, չը պէտք է ընդհանրացնենք նրա ասածները և վերագրենք նրա զգացմունքները այն ազգին, որին նա պատկանում է։ Կարող են այդպիսի մարդիկ պատահել և հայերի մէջ դէպի ուրիշ ազգերը։

Առանձին անհատների ու նոյնիսկ խմբակների այդպիսի զգացմունքների դէմ հանդիման պէտք է ասպարէզ մղենք ազգերի համակեցութեան սկզբունքը և ապացուցանենք, որ մեր երկրի բարօրութիւնը պահանջում է մեր բոլորի համերաշխ կուլտուրական գործակցութիւնը։

Մենք՝ միասին ապրող բոլոր ազգերս մի պարտաւորութիւն ունենք դէպի միմեանց և դէպի ամբողջ երկիրը՝ գործել համերաշխ և դարձեալ համերաշխ։

Դա և անհրաժեշտութեան պահանջն է։

Ա. Քալանթար

ՄՈՒԶԱՖՖԷՐԷԴԴԻՆ ՇԱՀԻ ՎԱԽՃԱՆՎԵԼԸ

Պարսից Մուզաֆֆէրէդդին Շահը վախճանվեց։

Հեռագրական լուրերը վաղուց պատրաստել էին բոլորին այդ վախճանի մասին։

Ինքը Շահը, գիտակցելով իր վտանգաւոր դրութիւնը և զգալով մօտալուտ մահը, կանչել էր Թագաժառանգին և յանձնել նրան պետական գործերը։

Մուզաֆֆէրէդդին Շահը, չը նայելով իր կարճատև թագաւորութեան (մօտ տասն տարի), կը թողնէ անջնջելի անուն պարսկական պատմութեան մէջ, Նա տուեց իր ժողովրդին սահմանադրութիւն, որով պէտք է պարսից ազգը կառավարէ իր պետական կեանքը։

Կունենայ արդեօք այդ սահմանադրութիւնը յարատևութիւն և կը զարգանայ արդեօք կանոնաւոր կերպով, այդ ցոյց կը տայ մօտաւոր ապագան, բայց ինքնըստինքեան սահմանադրութիւն շնորհելը Պարսկաստանի նման երկրում մի խոշոր երևոյթ է, որովհետև ասիական այդ հին պետութիւնը դարեր շարունակ սնվել էր միահեծանութեան և բռնակալութեան թելադրութիւններով։

Հանգուցեալ Շահը իր թագաւորութեան սկզբից յայտարարեց իրան եւրօպական կարգերի համակրող և փորձեց մտցնել մի քանի բարեփոխութիւններ երկրի վարչական գործերում, բարւոքեց մինիստրական կազմը, զսպեց նահանգապետներին, աւելացրեց կրթարանների թիւը և ուղարկեց պարսիկ երիտասարդներին ուրիշ երկիրներ կատարելագործվելու։

Ճիշտ է՝ Շահի արածը շատ մեծ չէր, բայց կրում էր մի բարձրագոյն բարեացակամութեան հաստատ նշան, որ քաջալերող ազդեցութիւն էր գործում բոլոր այն մարդկանց համար, որոնք համակրում էին եւրօպական կարգերին։ Եւ անկասկած՝ Շահի այդպիսի տրամադրութիւնը նպաստեց այն ազատամիտ մի քանի շարժումներին, որոնք երևան եկան Իրանի երկրում և բազմացրին սահմանադրութեան կուսակիցների թիւը։

Մասնաւորապէս հայերի վերաբերմամբ Մուզաֆֆէրէդդին Շահը իր թագաւորութեան առաջին օրերից ցոյց տուեց բարեհաճ տրամադրութիւն ստորագրելով մի ֆարման հայոց կրթական գործի մասին և ամեն մի աչքի ընկնող դէպքում յայտնելով իր համակրութիւնը Պարսկաստանի հայ ժողովրդին։

Պարսկաստանի ժողովուրդը երախտագիտութեամբ կը յիշէ Մուզաֆֆէրէդդին Շահի բարենորոգչական ոգին և համեմատաբար ոչինչ կը համարէ Պարսկաստանում նկատվող ֆինանսական այն նեղ դրութիւնը, որ համարվում է կառավարչական կազմի թերութիւնների արդիւնք։

Պարսկաստանի նոր գահակալ Մահմադ Շահը կոչված է շարունակելու իր հօր սկսած ընդարձակ ծրագիրը։

Ա. Ք.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոնդօն, 27 դեկտեմբերի

Թեհրանից լրագիրներին հաղորդում են, որ դեկտեմբերի 26-ին, երեկոյեան 11 ժ. 50 րօպէին, պարսից Շահը վախճանվել է։ Այդ մասին պաշտօնապէս չէ յայտարարված։

(«Հ. Գ.»)

Թեհրան, 27 դեկտեմբերի

Առաւօտեան ժամը 9-ին պաշտօնապէս յայտարարված է Շահի մահվան մասին։

(«Հ. Գ.»)

Լոնդօն, 27 դեկտեմբերի

«Դէյլի-Մէյլ» լրագրին հեռագրում են Թեհրանից դեկտեմբերի 24-ին, որ այնտեղ կայացել է մէջլիսի հասարակական ժողովը, որ նուիրված է եղել ազգային բանկ հիմնելու հարցի հետ՝ հանդերձ երկրի ֆինանսական տնտեսութիւնը կազմակերպելու խնդրի։ Մէջլիսի անդամներից մի քանիսը լրագրի թղթակցի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ ասել են, որ ներքին փոխառութիւն կնքելու հարցը անխուսափելի է համարվում և որ գահաժառանգը լարում է իր բոլոր ույժերը համոզելու մէջլիսին, որ սա իր կողմից համաձայնէ փոխառութիւն կնքելուն։ Ծայրայեղ նացիօնալիստ անդամները պահանջում են, որ մաքսատների վրա կատարվող հսկողութիւնը բէլգիացիներից յանձնվի մէջլիսին։ Այսօրինակ պահանջ դնում է և մամուլը։

(«Հ. Գ.»)

Պետերբուրգ, 27 դեկտեմբերի

Առաւօտեան ժամը 9-ին զինուորական գլխաւոր դատարանի բակում ատրճանակի երեք հարուածներով սպանվեց զինուորական գլխաւոր դատախազ գեներալ-լէյտենանտ Պաւլօվը։ Ինտենդանտային վարչութեան զինուորի զգեստ հագած մարդասպանը դիմեց փախուստի և հետապնդման ժամանակ վիրաւորեց երկու ոստիկանի և մի երեխայի, իսկ վերջում բռնվեց։

(«Հ. Գ.»)

Պետերբուրգ, 27 դեկտեմբերի

Գեներալ Պաւլօվի երիտասարդ մարդասպանը հագած էր զինուորական գրագրի սովորական զգեստ։ Զինուորական զինուորա-դատարանային վարչութեան բակը նա մտաւ թևի տակ թղթակալ դրած և առանց արգելքի հանդիպելու դռնապանի կողմից։ Գրքոյկի մէջ եղած ստորագրութիւնները և մի քանի ծրարներ ստանալու համար եղած ստացագրերը, ինչպէս պարզվեց, գրված էին միևնոյն անձնաւորութեան ձեռքով։ Մարդասպանը գեներալի վրա կրակեց 6 անգամ։ Հետապնդման ժամանակ, Գլինկայի և Օֆիցերսկի փողոցներում նա իր մօտ եղած երկու ատրճանակներից կրակեց 17 անգամ, որով երկու գնդակով մահացու կերպով վիրաւորեց ոստիկան Եգօրօվին։ Ոստիկանները սկզբում չը կրակեցին վախենալով վնասել Մարինսկի թատրոնի մօտ տոմսակներ գնող ամբոխին։ Փախչողի ետևից կրակ բացվեց արդէն Օֆիցերսկի փողոցում։ Պատահմամբ վիրաւորվեց 14-ամեայ մի երեխայ և կրկին մի ոստիկան։ Մարդասպանի մօտ գտնվեցին 2 ատճանակ փամփուշտներով։ Մարդասպանը յամառութեամբ հրաժարվեց իր ով լինելը յայտնել։ Նա ուղարկվեց պահանորդական բաժինը։ Մարդասպանի արձակած գնդակների ծայրերը կտրած էին։ Գեներալ Պաւլօվի վէրքերը սարսափելի են. վիրաւորված է կրծքից 4 տեղից և պարանոցից—2 տեղից։ Մի քանի րօպէից յետոյ գեներալը հոգին աւանդեց և շուտով էլ տարվեց իր բնակարանը, ուր կատարվեց հոգեհանգիստ ընտանիքի և հարազատների ներկայութեամբ։ Երկրորդ հոգեհանգիստը կատարվեց ցերեկվայ ժամը 2-ին։

(«Հ. Գ.»)

Նոր-Բայազէտ, 26 դեկտեմբերի

Քաղաքային աւագ ընտրվել է Ստեփան Բասիկեան, իսկ օգնական Կարապետ Տէր-Սահակեան։

ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ՇՓՈՒՄՆԵՐ

I

Պատմական ներկայ բոպէն դրել է հասարակութեան առաջ մի շարք ծրագրական հարցեր։

Ի՞նչ է այս ու այն անհատի, խմբի, կուսակցութեան դաւանանքը։ Ինչո՞վ են գործողները տարբերվում միմեանցից։ Ի՞նչ ծրագիրներով են մարդիկ մշակում գործնական առաջարկութիւններ գործադրութեան համար։

Ահա մի շարք հարցեր, որ լսում ենք իւրաքանչիւր օր հրապարակի վրա։

Թէ ընդհանուր պետական բարեկարգութեան, թէ Անդրկովկասի վարչական կազմակերպութեան և թէ հայ ժողովրդի բարեկեցութեան խնդիրները դարձել են քննութեան առարկայ հասարակութեան համար։

Ցաւակցէս հայ հասարակութիւնը մղված է դէպի մի բարդ վիճաբանութիւն, որ վերաբերում է այն հասարակական և քաղաքական հոսանքներին, որոնք գործել են մեզանում տարիներ շարունակ կամ հանդէս են եկել ազատագրական շարժումների ազդեցութեան տակ։

Մշակական, մեղուական, դաշնակցական, հնչակեան, սօցիալ-դեմօկրատական, կադետային և ուրիշ հոսանքների միմեանց ընդհարվելը, միանալը և նրանց ազդեցութեան շրջանների քննութիւնը զբաղեցնում է մեր հասարակութիւնը։

II

Ներկայ 1906 թւականին մենք բաւականաչափ զբաղվեցինք մտաւոր և հասարակական հոսանքների ուսումնասիրութեան հարցերով և նոյնը պէտք է շարունակենք առաջիկայ 1907 թւին։

Մենք պարզել ենք մեր տեսակէտները ամենաորոշ կերպով և գրաւել ենք որոշակի դիրքեր թէ ընդհանուր քաղաքական և թէ զանազան խնդիրների վերաբերութեամբ։

Կեանքը առաջ է մղում նոր երևոյթներ, որոնք կարօտ են լուսաբանութեան և քննութեան։ Հանդէս են գալիս նոր հոսանքներ, որոնց վերաբերմամբ պէտք է գնահատութիւններ կատարել։

Այդ լուսաբանութիւնները և գնահատութիւնները մենք կանենք, բայց որպէս զի տեղի ունեցող երևոյթները և առաջացած հոսանքները բացայայտված լինեն մեր հասարակութեան, անհրաժեշտութիւն է զգացվում, որ մենք կարողութիւն տանք մարդկանց արտայայտվելու, իրանց կրծող ու յուզող մտքերը հանդէս հանելու։

III

Ահա այդ պատճառով մենք, ունենալով մեր որոշակի հայեացքները և դիրքերը, վերապահելով ամեն իրաւունք քննադատելու մեր հասարակական կեանքի բոլոր խնդիրները, որոշ չափով տեղ կը տանք նաև մի քանի այնպիսի յօդուածներ, որոնց եզրակացութիւնների հետ մենք համամիտ չենք, բայց որոնց մէջ հետաքրքրական են կամ հեղինակի դատողութեան եղանակը, կամ պատմական ցուցմունքները, կամ փաստական յայտնի տեղեկութիւններ։

Այդ վերապահութեամբ մենք տեղ կը տանք ոչ միայն «խմբագրութեան նամակներին», այլ և մի քանի ամբողջացրած յօդուածների։

Մեր ժամանակը քննադատական շրջանի մէջ է, և մենք կը ցանկանայինք, որ մեր ընթերցողները ծանօթ լինէին զանազան հոսանքների հետ և համոզվէին, որ այն, ինչ որ մենք պաշտպանում ենք և դաւանում, նա խոր գիտակցական է և արդիւնք է բազմակողմանի քննադատական աշխատանքի։

Ա. Քալանթար

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԽԱՆՔԵՆԴԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

—

«Մշակ» լրագրի № 242-ում հրատարակելով իմ գործակալական շրջանի Թուրք-հայկական ընդհարումներից առաջացած վնասների տեղեկագիրը, յայտնել էի, որ նա թերի է։ Այժմ ուղարկում եմ արդէն լրացված տեղեկագիրը։

Իմ գործակալական շրջանում սպանված են 193 հոգի, որոնցից մէկը քահանայ և միւսը պրիստաւ (Ներսէս քահանայ Բախտամեանց և Սաշա բէկ (Աղէքսանդր) Միրզոյեանց), անհետ կորած են 14, վիրաւորված են 33, (առ այժմ ցուցակագրված են 31 այրի մնացած կանայք և 102 որբ երեխաներ, հաշուից դուրս են էլի 60 այրի կին և 100 որբ երեխաներ), գիւղերը տուգանք վճարած են 8313 րուբլի, էկզեկուցիայի պատճառով ծախսվել է 5652 րուբլի (սրա մէջ չեն հաշւած այն ծախսերը, որոնք իրանք գիւղացիներն են մատակարարել, օրինակ հաց, միս, թէյ, շաքար, փայտ, գարի, դարման և խոտ)։ Խուզարկութիւնների ժամանակ կօզակների ձեռքով գողացված է 1160 րուբլու տնային զանազան իրեր, խլված է 82 բերդանի հրացան, 4 պատօնի, 4 ատրճանակ, 1 դաշոյն և 650 փամփուշտ։ Ռմբակոծութեամբ կործանված են 21 տուն, 3 մարագ և սպանված է մի եզ։ Կօզակների ձեռքով աւերված է մի տուն։ Գողացված են 3422 եղջիւրաւոր անասուն, 1072 ոչխար և այծ, 60 ձի և 39 ջորի և էշ։ Կրակված են Հարար, Ալիղուլի, Ջամիլլու, Ուլուբաբ և Ղազանչի գիւղերը, որոնք ըստ մատաղաբաժնի կազմում են 200+120+9+20+60=409 տուն և Խրամորթ գիւղից 14 տուն, ընդամենը 423 տուն։ Այժմ խսպառ կործանված են միմիայն Հարար, Ալիղուլի և Ջամիլլու գիւղերը, իսկ Ուլուբաբը, Ղազանչին և Խրամորթի 14 տները վերանորոգվել են։ Կողոպտված են 4 եկեղեցի, կրակված է մետաքսեայ թել քաշելու և ոլորելու 2 գործարան, 216 դէզ խոտ, Վարազաբոյնի 100, Փիրամաքու 150 (Շուշիքենդի ձմեռանոց), Ալիղուլու 120, Հարարի 200, Ջամիլլուի 9, Ուլուբաբի 20, Ղազանչու 60 և այլ գիւղերից 29 մարագներ, ընդամենը 568 մարագ և 17 գոմ։ Կտրտված են Նախիջևանիկի բոլոր խաղողի այգիները, այլ և ուրիշ գիւղերից 6 այգի։ Յափշտակված են 22 սայլ իրանց ցռեններով և գոմէշներով, 10 ջաւալ, մի կացին և 1 խուրջին։

Չարձանագրված վնասներն էլ (թալանված տները) անհագին են, որոնց մանրամասնութիւնը ձեռք բերելը և գնահատելը անհնարին եղաւ, որովհետև մարդիկ ցրված են զանազան տեղերում, որոնք շատ հեռու են իմ կենտրոնի շրջանից և անհնարին հարցաքննութեան ենթարկել։

Միաժամանակ յայտնում եմ, որ, «Մշակի» № 242-ում իմ կազմած տեղեկագիրը հրատարակվելուց յետոյ, ստացայ մի քանի նամակներ, որոնցով զանազան բացատրութիւններ են խնդրում։ Բացատրում եմ, որ բոլոր սպանվածները կռւող ոյժեր չեն ներկայացնում (կռւողներից սպանված են հազիւ 30 հոգի), այլ հնձողներ, կամ խոտ հարողներ, որ գլնդակահարվել են հանդերում, կամ ճանապարհորդներ (զարադլաղցիներից մի օրում Թըթու-Ջրի ճանապարհին սպանվեցին 13 հոգի և դիակներն անյայտացվեցին), գիւղերում կռւի ժամանակ սպանված ծերուկներ, պառաւներ, կանայք և երեխաներ։ Այլ և այդ տեղեկագիրը ամբողջ Ղարաբաղի գիւղերինը չէ, այլ միայն ինձ յանձնված գործակալութեան, որից 25 գիւղ Խաչէնն է, 15 գիւղ Վարանդայից և 3 գիւղ Զանգեզուր գաւառից (Զաբուխ գաւառ), ընդամենը 43 գիւղի տեղեկագիր է։ Միւս գործակալական կենտրոններում էլ ընդհարումներ եղել են, որոնց տեղեկագրերը կը հրատարակվեն ժամանակին։ Ասել է թէ՝ դեռ մնում է 132 գիւղերի տեղեկագիրը, բացի Նուխու փոխանորդութիւնից։

Խանքենդ-աւանի շրջանի գործակալ՝
Պետրոս քահանայ Տէր-Յովհաննիսեանց
Խանքենդ-աւան, 11 դեկտեմբերի

Մ Ա Մ Ո Ւ Լ

—

Չը նայելով որ համաձայնութիւնների ու համերաշխ գործունէութեան գաղափարը բոլոր ձախակողմեան կուսակցութիւնների կողմից էլ ընդունվում է որպէս անհրաժեշտ պահանջ, այնուամենայնիւ պրօգրեսիվ տարրերի համար այդ այժմէական հարցը ցանկալի լուծումն դեռ չէ ստացել. դրա փոխարէն սաստկանում են տեօրեթիքական վէճերը ծրագրների, պլատֆօրմայի, տակտիկայի ու այլ հարցերի մասին։ Համաձայնութեան համար իբրև ընդհանուր պլատֆօրմա Պլեխանովը առաջարկեց «Լիազօր Դումա». դրա դէմ սկսվեցին առարկութիւններ և առաջարկվեցին նոր պլատֆօրմաներ, որը մինչև այժմ էլ ապարդիւն կերպով ծեծվում է, բայց չէ լուծվում։ Մինչդեռ ներկայ մոմենտում պէտք է թողնել այդ սկզբունքային հարցերը և միանալ այն պահանջների շուրջը, որոնք անվիճելի են և ընդունելի բոլոր օպպօզիցիօն կուսակցութիւնների համար։ Չը պէտք է պնդել, որ անպատճառ ծրագրների բոլոր վիճելի կէտերն էլ այժմից լուծվեն։ Կուսակցական վէճերը երբէք չեն սկսվել և ոչ էլ վաղը կը վերջանան. որովհետև ծրագրային ու տակտիկական հարցերը օրգանական կապ ունեն իրանց առաջադրողների հասկացողութիւնների ու ձգտումների հետ։ Շօշափելով այդ հարցը, «Молодая Жизнь» լրագիրը ասում է.

Բանւորների մեթոդներն ու տակտիկան տարբեր են բուրժուազականներից։ Դա արդէն սահմանված է Աստծուց, և փոխտրականները ի զուր են դրա դէմ։

Թող ամեն մի կուսակցութիւն, որտեղ և ինչպէս որ կարող է, պաշտպանէ իր սկզբունքային հարցերը, բայց երբ որ խնդիրը վերաբերվում է գործնականին, ուրիշ մի քանի կուսակցութիւնների համար ընդհանուր խնդիրներին, հարկաւոր են արդէն զուտ տեխնիքական առաջարկներ։

Երկուսից մէկը. կամ պէտք է ձախակողմեան կուսակցութիւնները միանան ու այնպէս դիմադրեն սև հարիւրակային բլոկին, և կամ թէ՝ նրանցից իւրաքանչիւրը այնքան զօրեղ են, որ կարող են ընտրութիւնների ժամանակ իրար հետ մենամարտել, բոլորովին արհամարհելով աջակողմեանների բլոկը։

Ապա լրագիրը, նկատելով որ Սենատի մեկնութիւններից ու Ստոլիպինի ստեղծած կարգերից յետոյ ձախակողմեան կուսակցութիւններից և ոչ մէկը չէ կարող յաղթութեան վրա վստահ լինել առանց միւսների աջակցութեան, շեշտում է, որ սօցիալ-դեմօկրատները թէև մեծ շանսեր ունեն քաղաքներում, շատ թոյլ են գիւղերում, բայց հէնց քաղաքներումն էլ նրանք հաստատուն հող չունեն իրանց ոտների տակ։ Այդպիսով սօց.-դեմ. յաղթանակը հնարաւոր է, բայց երաշխաւորել չէ կարելի։ Այդ տեսակէտից համաձայնութիւնը ձախակողմեան կուսակցութիւնների համար կեանքի և մահվան խնդիր համարելով, լրագիրը ասում է.

Եթէ նրանց համար թանգ է ռուսաց ազատագրական շարժման ճակատագիրը, նրանք պէտք է լինեն զիջող, նրանք չեն պահանջէլ, որ միւս կուսակցութիւններն էլ իրանց դրօշակի տակ համախմբվեն։ Այժմ համաձայնութիւնը հնարաւոր է միայն թեկնածուների ցուցակի հարցի՝ անձանց վերաբերմամբ։ Անհրաժեշտ է, դեմօկրատական բարենորոգումներից դէպի ձախ գտնվող կուսակցութիւնները միացած կազմեն լիազօրների և թեկնածուների ցուցակները։

*

Սահմանադիր-ռամկավար կուսակցութեան դէմ սկսված հալածանքները առիթ են տալիս մայրաքաղաքի լրագրներին արձանագրել այդ փաստը իբրև ապացոյց, որ Ստոլիպինի կառավարութիւնը սկզբում նպատակ դնելով կռիւ մղել յեղափոխութեան դէմ՝ այժմ իր բոլոր ոյժը կենտրոնացրել է օպպօզիցիայի դէմ։ Այդ կռիւը հետևեալ կերպով է բնորոշում «Петерб. Вѣд.»-ն։

Տակտիկայի փոփոխութիւնը,—ասում է լրագիրը,—արմատականապէս փոխել է կաբինետի ծրագիրը։ Այլևս ոչ թէ յեղափոխութեանն ու հակա-յեղափոխութեանն էր նա նպատակ դրել յաղթելու, այլ օպպօզիցիային, այսինքն ժողովրդական ազատութեան կուսակցութեանը։ Այս վերջին երեք ամիսները Ստոլիպինը դրանով էր միայն զբաղված։ Եւ պէտք է խոստովանել, որ նա իր գործը առաջ էր տանում արիութեամբ և հետևողականութեամբ։ Ունենալով իր տրամադրութեան տակ միայն ֆիզիքական ոյժ, կաբինետը նրան գործադրում էր որտեղ և ինչպէս որ կարողանում էր, երբեմն ապաւինելով Սենատին, երբեմն մտնելով զեմստւային և ազնուականութեան գործունէութեան մէջ, երբեմն էլ փարելով օրինական ճանաչված երկու հասարակական կուսակցութիւններին (հոկտեմբերի 17-ի և ռուս մարդկանց), երբեմն նահանջելով, երբեմն էլ գրոհ տալով։

Ուշագրաւը այն է, որ «Пет. Вѣд.» լրագիրը մինիստրութեան այդ քաղաքականութիւնը բնական է համարում իբրև յաղթողի տեսակէտ, որ ամեն տեսակ միջոցներով ձգտում է արմատախիլ անելու օպպօզիցիան։

Ստոլիպինը իրաւունք ունի։ Նա է յաղթողը։ Իսկ նրանք, որոնք այդ օպպօզիցիան համարում են ռուսական սահմանադրութեան կենտրոն և Ռուսաստանի ապագայ բարգաւաճութեան յոյսը նրա վրա են դրել միայն, կարող են դեռ սպասել։ Հարկաւոր է նախ ոչնչացնել կադետներին...

Յօդուածագիրը, որ անհամակրութեամբ է վերաբերվում կադետներին, հետևեալ թունաւոր նկատողութիւնն է անում կառավարութեան հասցէին.

Կառավարութիւնը խաբեց կադետներին։ Վախենում եմ միայն, որ չը լինի թէ նա իրան էլ խաբի...

*

«Р. В.» լրագիրը, խօսելով այն քաղաքական ապիտութեան մասին որ ցոյց են տալիս քաղաքական կուսակցութիւններից ոմանք, նկատում է, որ ներկայ քաղաքական պայքարի ամենացաւալի երևոյթն է այդ։ Մարդիկ, որոնք նպատակ են դրել հասնել մանիֆեստով խոստացված շնորհներին, յանկարծ դուրս է գալիս, որ դէմ են այնպիսի տարրական հարցերի, որոնք անմիջական կապ ունեն այդ մանիֆեստի հետ, ինչպէս, օրինակ, պարլամենտարիզմի դէմ։ Այդ վերաբերմունքն է ցոյց տալիս ներկայումս «հոկտեմբերի 17-ի դաշնակցութիւնը», որի գործունէութեան մէջ կարմիր թելի նման ընդգծվում է «պարլամենտարիզմի» դէմ ուղղված «համոզված» ու յամառ կռիւը։ Դա առիթ է տալիս «Р. В.»-ին ասելու.

Մենք կարծում ենք, որ ներկայ կաբինետը յենվելով հոկտեմբերեանների և «իսկական ռուսների» ոյժի վրա գլխաւորապէս կռւում է մինիստրների պատասխանատւութեան պահանջի դէմ, որովհետև միայն անպատասխանատու լինելն է նրան հնարաւորութիւն տալիս պահպանելով սահմանադրական պալատի արտաքին ձևը՝ ոչնչացնել նրա էութիւնը, խօսելով ներկայացուցչական կառավարութեան մասին՝ ոտնատակ տալ ժողովրդական ներկայացուցիչների իրաւունքները, կռւել սահմանադրական կուսակցութիւնների դէմ և պաշտպան հանդիսանալ սահմանադրական կարգի թշնամիներին։

*

«Կոչնակ» լրագրի առնելով, դեկտեմբերի 1-ին (Ն. տ.) Բոստոնի հայերը մի հացկերոյթ են տուել ի պատիւ Ջէյմս Րէյնօլդսին, հայկական դատի համար իր մատուցած ծառայութիւնների համար։ Այդ հացկերոյթին ներկայ են եղել 250 հոգուց աւելի հայեր և ամերիկացիներ, որոնց թւում յայտնի օր. Բլաքուէլ, ևլն. Միդ և այլն։ Հացկերոյթի ժամանակ Րէյնօլդսը այն կարծիքն է յայտնել հայկական հարցի առիթով, որ լաւ կը լինէր Հայաստանը դնել ոչ թէ Եւրոպայի միացեալ պետութեանց իրաւասութեան տակ, այլ

Միակ պետութեան մը պաշտպանութեանը տակ ուրեմն կրնայ բարեկարգութիւն յուսացուիլ. չպիտի փորձեմ ըսել թէ որ պետութեան։ Եւրոպական պետութիւն մը ըլլալու է, ու յառաջադիմական ալ. պետութիւն մը՝ որ կառավարելու և կարգապահութեան զօրաւոր գաղափարներ ունի։

Բուն ձեր պարտականութիւնն է յուզել Հայկական Խնդիրը։ Ոչ մի չարիք ուղղուած է առանց անխոնջ գրգռիչի մը։ Ուշ կամ կանուխ լիապէս շահուած են այն ամեն արդար դատերն, որոնց չեն պակսած գրգռիչներ։

Կարդացիր յանձնաժողովի կողմից գր. Ճեյլեան պատասխանելիս այն միտքն է շեշտել,

Թէ Նախագահ Րուզվէլթ կրնար միջամտել Հայկական Հարցին, ու Թելադրեց Պ. Րէյնօլտսի որ Նախագահէն խնդրէ Լա Հէյի համաժողովին ներկայացնել Հայկական Հարցը Ամերիկեան պատուիրակներու միջոցաւ։

ԳԱՆՁԱԿԻ ՇՐՋԱՆԻՑ

—

Դեկտեմբերի 23-ին

Այսօր առաւօտեան, ժամի 8-ին, կօշկակար Սմբատ Մելքիսէթեանի արհեստանոցում հետևեալ շատ ցաւալի դէպքը տեղի ունեցաւ։

Սամարչեան ազգանունով աշակերտը, ատրճանակը գրպանից հանելով, դնում է սեղանի վրա. Նրա ընկեր 14-ամեայ աշակերտը սեղանից անզգուշաբար վերցնելով ատրճանակը՝ բացվում է ու գնդակը դիպչում է այնտեղ նըստած 18-ամեայ Գերասիմ Յարութիւնեանի ճակատին, որը մի շատ հեզ և համեստ պատանի էր։ Վիրաւորեալի դրութիւնը անյուսալի է. ստացած վէրքից վիրաւորը չարաչար տանջվում է։ Վիրաւորը մօր միակ զաւակն է։

Գաւառիս Բանանց, Բարհաւա, Խաչակապ, Կիրանց, Զօդառ, Մերզիկ, Փիփ, Ոսկանապատ գիւղացիք, որոնք բնութեան հասցրած պատահարներից մեծ զրկանքներ են կրում հացի կողմից, իրանց հաւատարմատար Արշ. Տէր-Աւետիքեանի միջոցով խնդրամատոյց են եղել ճանապարհների հաղորդակցութեան մինիստրին, որ իրաւունք տրվի իրանց Ստաւրոպոլից առանց հերթի իրանց գիւղական ստիպողական կարիքների համար հացահատիկ ընդունել։

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը, յարգելով գիւղացիների խնդիրը, կարգադրել է, որ Ստաւրոպօլից յիշեալ գիւղացիների համար 63 վագօն հացահատիկ ընդունվի, օրական 5-ական վագօն, առանց հերթապահութեան կանօնների ենթարկվելու։

Նահանգական վարչութիւնը, յայտնելով գիւղացիների ներկայացուցիչ Արշ. Տէր-Աւետիքեանին, միաժամանակ հրաման է արձակել գաւառական և նահանգական ոստիկանութեան կազմին հսկողութիւն ունենալ, որ մինիստրութեան որոշումը ծառայէ իր իսկական նպատակին, և մասնաւոր մարդիկ չը չարագործեն տրված արտօնութիւնը։

Ինչպէս տեղեկացանք, գիւղացիներին շընորհված այդ արտօնութիւնից նրանք չեն կարողանալու օգտվել, նախ՝ որ նրանք անկարող են և միջոցներից զուրկ է օրական 5-ական վագօն ցորեն յանձնելու նշանակված կայարանում, երկրորդ՝ ներկայումս մասամբ վերացել է Վլադիկավկազի երկաթուղու վրա տիրող խիստ հերթապահութիւնը, և անհագին քանակութեամբ հաց է ստացվել և ստացվում յիշեալ գծի վրա գտնվող կայարաններից։

Ուրիշ բան կը լինէր, եթէ գիւղական ներկայացուցիչը խնդրամատոյց եղած լինէր ճանապարհների հաղորդակցութեան մինիստրին էժանացրած սակագնով հացահատիկ բերելու, ինչպէս անցեալներում յիշատակած էր «Մշակի» համարներից մէկում, միաժամանակ հրաւիրելով այդ հանգամանքի վրա թէ նպաստամատոյց և պարենավորման մասնաժողովի և թէ քայքայված գիւղական հասարակութեան ուշադրութիւնը։

Ապա թէ ոչ 10 օր շուտ, 15 օր ուշ ստանալուց (ալիւրները)՝ ոչ գիւղացիների տունը կը շինվի և ոչ էլ կը քանդվի...

Ա. Սահակեան

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—

Սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան համառուսական կոնֆերենցիան համաձայնութիւնների խնդիրը թողել է տեղական կազմակերպութիւնների կամքին։ Ինչպէս պարզվել է վերջին ժամանակներս տեղի ունեցած փաստերից, այդ հարցի լուծումը դարձեալ ֆրակցիական բնաւորութիւն ունի։ «Փոքրամասնականները» կոնֆերենցիայի որոշումները ընդունում են լիովին, իսկ «մեծամասնականները» համարում են այդ որոշումները անպարտադիր և միանգամայն հակառակ են սահմանադիր-ռամկավարների հետ որևէ համաձայնութիւն կայացնելուն։ «Մեծամասնական» ֆրակցիայի Մօսկվայի կոմիտեն մօտ օրերս ընդունել է մի բանաձև, որով անհրաժեշտ է համարվում որպէսզի սօցիալ-դեմօկրատիան ընտրութիւններին մասնակցի բոլորովին ինքնուրոյն կերպով։ Համաձայնութիւնները թոյլատրվում են միայն յեղափոխական կուսակցութիւնների հետ։ Նոյն որոշումն են կայացրել նոյնպէս և Նիժեգորոդեան, Չելեաբինսկի, Կոստրոմայի և մի քանի ուրիշ տեղերի «մեծամասնական» կոմիտեները։ Հակառակ այդ կազմակերպութիւններին, համաձայնութեան ցանկութիւն են յայտնել Դոնի, Դոնի շրջանի, Օդեսայի, Ուկրայնայի կոմիտեները և այլն, որոնց մէջ գերակշռում է «փոքրամասնականների» հոսանքը։ Նկատելի է, որ այս վերջին հոսանքը զօրեղանում է։ Այնպէս որ այժմ համաձայնութիւնների ցանկութիւն են յայտնել այնպիսի կազմակերպութիւններ, որոնք առաջ համակարծիք չէին «փոքրամասնականների» հետ, ինչպէս օրինակ Բունդը, Սիբիրեան դաշնակցութիւնը։

—Սօցիալ-դեմօկրատները իրանց ընտրողական պլատֆօրմայում քաղաքային ինքնավարութիւնների հարցում հետևեալ պահանջներն են առաջադրում. 1) ամենաընդարձակ միջոցներ աշխատանքի հսկողութեան համար, 2) արմատական բարենորոգումներ ժողովրդական կրթութեան գործում, 3) սահմանել ձրի իրաւաբանական օգնութիւն, 4) բաւարարութիւն տալ էժանագին բնակարան ունենալու կարիքներին, 5) քաղաքի կողմից գներ նշանակել անհրաժեշտ մթերքների վրա, 6) օգնել չքաւոր ազգաբնակութեանը, 7) նշանակել քաղաքային պրօգրեսիվ եկամտատուրք, 8) քաղաքային ինքնավարութեանը վերադարձնել լիակատար անկախութիւն ադմինիստրացիայից, 9) քաղաքային ձեռնարկութիւնները յանձնել քաղաքին, 10) կազմել քաղաքային միլիցիա, 11) ընտրութիւններ կատարել քաղաքային միլիցիայի համար, 12) քաղաքային վարչութեան ընտրութիւնները կատարել ընդհանուր, հաւասար և այլն, ընտրողական իրաւունքների հիման վրա։

—Ներկայումս ժողովրդական-սօցիալիստների կուսակցութիւնը ունի ընդամենը 20 խմբակ գաւառներում, գլխաւորապէս Վեատկայի, Պենզենի, Սիմբիրի, Սարատովի, Վօրօնեժի, Մօսկվայի նահանգներում և Դօնի զօրաշրջանում։ Քաղ. խմբակների կազմը ճնշող մեծամասնութեամբ կազմված է [illegible] ինտելիգենտներից և ուսանողներից, գիւղերում՝ գիւղացիներից և տեղական ինտելիգենցիայից։ Կուսակցութեան կենտրոնական կոմիտեն այժմ աշխատում է պարզել իր կազմակերպութիւնների անդամների ընդհանուր թիւը. դրա համար նա յարաբերութիւններ է սկսել 20 խմբակների հետ։ Բնորոշ է այն, որ միտինգներում և ժողովներում ժողովրդական-սօցիալիստների ամենասաստիկ թշնամիները «ձախակողմեանների» մէջ սօցիալիստ-յեղափոխական կուսակցութեան ներկայացուցիչներն են լինում, որոնցից շատ ժամանակ չէ, որ բաժանվել են ժողովրդական-սօցիալիստները։ Սօցիալիստ-յեղափոխականների այդ թշնամական վերաբերմունքը արտայայտված է և նրանց այն բանաձևի մէջ, որ նրանք կայացրել են ընտրողական համաձայնութիւնների վերաբերմամբ։

—Հրէական իրաւունքի հաւասարութեան Պետերբուրգի բաժանմունքի կոմիտեն համաձայնութիւն է կայացրել սահմանադիր-ռամկավար կուսակցութեան հետ առաջիկայ ընտրութիւնների համար հետևեալ հիմունքներով. 1) Պետական Դումայի անդամների թեկնածուների և լիազօրների ցուցակները կազմում է սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնը հրէական իրաւունքի հաւասարութեան համաձայնութեամբ, 2) իրաւունքի հաւասարութեան ընկերութեան կոմիտեն ունի իր յատուկ ներկայացուցիչները թէ քաղաքային կենտրոնական կոմիտեում և թէ սահմանադիր-ռամկավար կուսակցութեան շրջանային կոմիտեներում։ Ուրիշ կուսակցութիւնների և քաղաքական խմբակների հետ բանակցութիւն վարելիս սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնը վարվում է հրէական իրաւունքի հաւասարութեան գիտութեամբ։

Դ Պ Ր Ո Ց Ն Ե Ր Ո Ւ Մ

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի յարուցած հարցը ուսանողական կենտրոնական օրգանների և նրանց լեգալիզացիա անելու առիթով մինիստրութեան բարձրաստիճան պաշտօնեաների շրջաններում լուրջ տարաձայնութիւնների է հանդիպել։ Այն ժամանակ, երբ այդ հարցի առիթով կազմված խորհրդակցութեան անդամներից ոմանք այն եզրակացութեան են եկել, որ համալսարաններին աւտօնօմիա շնորհելու մէջ է պարունակում և ուսանողական ներկայացուցչութիւն ունենալու իրաւունքը, խորհրդակցութեան միւս անդամները ընդհակառակը պնդում են, որ համալսարանական աւտօնօմիան կարգաւորում է միայն ուսումնարանական բնաւորութիւն ունեցող դպրոցական-կրթական գործերն ու կարգերը, իսկ ուսանողութեանը ոչ մի իրաւունք չէ տալիս ներկայացուցչութեան համար։ Ընդհանուր տրամադրութիւնը այն է, որ այսպէս ասած ուսանողական օրգանները լեգալ ճանաչվեն առանձին մշակված ստատուտներով, որոնց հիման վրա այդ օրգանները կը միան ու կը գործեն։ Վճռված է հարց ուղղում անել բոլոր համալսարաններին և բարձրագոյն դպրոցներին կենտրոնական մարմինների գործունէութեան մասին։ («Сегодня»)

—Գիւղատնտեսական բարձր կուրսերում ստեղծված կոնֆլիկտը, ռեֆերատների հարցի համար 33 ուսանողների խմբի կողմից պրօֆեսօրների խորհրդին ներկայացրած առանձին տարբեր կարծիքի առիթով, շատ սուր կերպարանք ստացաւ։ Դեկտեմբերի 15-ի ուսանողական ամբողջ հաւաքումը, որ հրաւիրված էր ուսանողների մէջ ծագած թիւրիմացութիւնները լուծելու համար, ճառախօսների խիստ կրքոտ ճառերի և 33 ուսանողների խմբակի անխնայ քննադատութեան շնորհիւ ընդհատվեց չորս ուսանողուհիների հիստերիքական հեկեկանքներով, որի համար նոյնիսկ հարկ եղաւ բժիշկ հրաւիրել։ Մինչև այժմ խաղաղ մթնոլորտը չափից դուրս խառնվել է. ուսանողները բաժանվել են երկու հակառակ բանակի։ Համագումարից հեռացող 56 ուսանողները մի բանաձև են կազմել և ներկայացրել ուսանողական աւագների խորհրդին, որտեղ ասված է, որ 33 հոգու ամբողջ տակտիկան զուտ ակադեմիական երևոյթ է, որի դէմ ուսանողները որոշել են մաքառել բոլոր ոյժերով, որպէսզի այդպիսով պաշտպանեն ու պահեն այն աւտօնոմիան, որ ձեռք է բերված այնչափ մեծ դժուարութեամբ։

ԴՊՐՈՑԱԿԱՆ «ՏՈՒՐՔԻ» ՀԱՐՑԸ

Մեր ժողովուրդը դարերի ընթացքում ստրկական վիճակի մէջ ապրելով՝ մի շարք այլ պակասութիւնների թւում իւրացրել է նաև երկու այլ վատ յատկութիւն—աղայականութիւն և մուրացկանութիւն։ Միևնոյն աղան, որը իր մասնաւոր գործերում զգոյշ է և հրամայող, հասարակական գործերում յօժար կամքով մուրացկանի ամօթալի դերի մէջ է մտնում՝ խաղաղ մոռանալով «թաւրին» ու վեհանձնութիւնը, միայն թէ ինքը մի քանի կոպէկ աւելի զոհողութիւն չանէ. իսկ այդ զգացմունքին աւելի ուժ է տալիս նախապաշարմունքը, որը նոյնքան կաշկանդել է մեր ժողովրդի միտքն ու կամքը, ուստի և միշտ վերջինս խրտնում է ամեն մի նոր գործից, որքան էլ այդ գործը բարի լինի։

Ես թռուցիկ կերպով երկու օրինակ կարձանագրեմ իբրև փաստ։ Առաջինը քահանաներին ռոճիկ նշանակելու հարցն է, որը ոչ միայն իրանց, այլև մեզ՝ վճարողներիս կազատէ ստորացուցիչ դերից. մեզանում արդէն գլուխ էր եկել 1900 թւին, Ե. Ծ. Վ. Մուրադեանի շնորհիւ. քահանաներին իրանց յօժարութեամբ ռոճիկ որոշվել էր և տուրքը հասարակութեան վրա մասնադրվել, սակայն Մուրադեանի յանկարծակի տեղից հեռանալով՝ մնաց անկատար։ Այնուամենայնիւ, յայտնի եղաւ, որ գլխաւորապէս զոհէ հարուստներից շատերը աւելի քիչ էին զոհում «տուրք» վճարելով։

Երկրորդը՝ մեր դպրոցի նիւթական վիճակը ապահովելու «տուրքի» հարցն է, որը միայն ինձ առիթ տուեց այս քանի տողերը գրելու, իսկ քահանայական ռոճիկի հարցը՝ որպէս գործնական ապացոյց՝ յիշեցնելու նպատակով գրեցի. թէև դպրոցական տուրքը սահմանելով մենք սովորականից շատ քիչ զոհողութիւն կանենք, բայց բարոյական որպիսի մեծ պարտ և օրինակելի գործ կատարած կը լինենք։ Դժբաղդութիւնն այս է, որ «տուրք» սահմանելուն հակառակվողներից շատերը՝ զանազան, անուղղակի միջոցներով աւելի շատ են վճարում, քան վճարելու են «տուրք» սահմանվելով, այլ խօսքով միանգամից՝ պատուաւոր միջոցով։ Սակայն սովորել ենք մուրացկանութեան և կաշկանդված ենք մեր սովորութիւններով... Մի երիտասարդ շատ լաւ նկատեց, թէ՝ «եղբայր, 2 ր. տալիս եմ ներկայացման տոմսի, բայց «բուֆէտում» 5 րուբլուց աւելի եմ ծախսում ազգ ու բարեկամներիս մասնաւոր պատիւ անելով»։ Եւ իրաւ, հասարակութեան աչքի ընկնող մի մասը, որ տարվայ ընթացքում 3—4 անգամ ակամայից է գալիս ներկայացումներին ու երեկոյթներին, կրկնակի է ծախսում «տուրքից», որը՝ ի հարկէ՝ սահմանվելուց յետոյ այլևս դպրոցի վարչութիւնը ստիպված չի լինի բռնի կերպով մարդկանց քաշ տալ ներկայացումներին և երեկոյթներին, այլ խօսքով՝ մուրացկանութեամբ փող կորզել ուրիշներից։ Ուրեմն, եթէ մենք անկեղծ սրտով համոզված ենք գործի լաւութեան և մենք ի սրտէ յարգում ենք այդ գործը՝ պէտք է ամեն ջանք գործ դնենք գլուխ բերելու համար, հակառակ դէպքում կեղծ է մեր համակրութիւնը։

Մ. Ղազարեան

Կաղզուան

ԲԱԹՈՒՄԻ ՇՐՋԱՆԻՑ

—

Դեկտեմբերի 26-ին

Այսօր առաւօտեան մի քստմնելի ոճրագործութեան լուրն էր կազմում քաղաքիս նորութիւնը։ Գիշերը ժամի 11-ից դէպի 12-ը Թիֆլիսի առևտրական բանկայի տեղիս բաժանման երկու հայ պահապաններից մէկը ատրճանակի մի հարուածով գետին է գլորում իր համերկրացի ընկերոջը։ Երկուսն էլ Իգդիրցի էին։ Սպանողը Իգդիրի, Նախիջևանի գաւառապետ և Բաթումի շրջանապետ Սլաւօչինսկուն յայտնի չէյմիան Հայրապետն է։ Բուն շարժառիթը տակաւին անյայտ է. պատմում են, որ Կարապետը վատ տրամադրված էր եղել դէպի իր ընկերը. այս հանգամանքից դրդված պատրաստվել էր հանգուցեալը օրերումս դուրս գալ գնալ դէպի Իգդիր։ Հայրապետը գիշերը ժամի 11-ին մտնում է բանկայի բաժանմունքը և գտնում է ընկերոջը քնած. զարթեցնում է և խօսքի բռնվում, որից յետոյ գնդակահար գետին գլորում։ Սպանվածին տարել են քաղաքային հիւանդանոց. սպանվածը ծեր, հասակաւոր մարդ էր, ընտանիքի և զաւակների տէր։

Ամսիս 22-ին, օրը ցերեկով, քաղաքիս երկաթուղու ապրանքային իջևանի մօտ չարագործները յարձակվում են բաթումաբնակ մի խալացու վրա և յափշտակելով 3000 ր. անյայտանում են։

Դեկտեմբերի 15-ին քաղաքումս տեղի ունեցած ընդհարումը տաճկահպատակ բանւորների միջև, որի մասին տպված էր «Մշակի» № 278-ի մէջ, սպառնում էր չարաչար հետևանքներ։ Ազդեցիկ մարդիկ ամեն միջոց ձեռք էին առել վրէժխնդրութեան կրակը մարելու։ Կիրակի օրը, ամսիս 24-ին, երկու կողմերն էլ եկած էին եկեղեցի, թւով մի քանի հարիւր հոգի. կային մէջները և վիրաւորվածները։ Պատարագին Մելեան քահանան մի խիստ սրտառուչ և խորը տպաւորող քարոզ խօսեց. նկարագրեց իրանց երկրի այն դժոխք վիճակը, որի մէջ այսօր տապակվում են իրանց հարազատները և որի երեսից իրանք փախել են. նկարագրեց իրանց տարագիր կացութիւնը, ազգային վիճակը, ունեցած զոհաբերութիւնները, իրանց փառաւոր գործունէութիւնը, ռուսահայ եղբայրներին առիւծաբար օգնութեան հասնելով. պատկերացրեց հայրենի երկնակամարի վրա երևացող նոր նշանները. յիշեցրեց սուրբ գործի համար նահատակվող հերոս նահատակների կտակները և խորունկ զգացմունքով հրաւիրեց խեղճ գալու, միմեանց հասցրած վէրքերն ու վիրաւորանքները եղբայրական սուրբ համբոյրներով բժշկելու, որ քրիստոսաւանդ և երկնային ուղիղ ապրելին է մանաւանդ այսպիսի պարագաներում։

Պատարագից յետոյ, հայր Մելեանի պատուէրով, խառնված կողմերը զոյգ-զոյգ եկան համբուրեցին աւետարանը և ապա համբուրվեցին իրար հետ։ Արդարև տեսնելու արժանի ուշագրաւ և սրտայոյզ տեսարան էր այդ միմեանց հետ համբուրվելու տեսարանը։

Շաբաթ երեկոյեան, ամսիս 24-ին, տեղիս սիրողները ներկայացրին քաղաքիս երկաթեայ թատրոնում «Մարվոյ ճրագներ» պիէսը։ Թատրոնում բաւական ժողովուրդ կար։ Խաղըն անցաւ բաւական աջող. իրանց լաւ խաղով աչքի ընկան օրիորդներից Փարսադանեան, Անահիտ և Սերոբեան Իւղարեր, իսկ պարոններից Գերասիմ Բաբաջանեան և Հայկ Սողոմոնեան։ Ներկայացումը հայոց դպրոցի օգտին էր. յոյս կայ զուտ արդիւնք ունենալու 450 րուբլի։

Դեռ անցած նոյեմբերի 19-ի ծխական ընդհանուր ժողովում էր որ պ. Լևոն Պալդովեան ընտրվեց նոր երէցփոխ. բայց մինչև այսօր դեռ ևս Թիֆլիսի հոգևոր կօնսիստորը ամենաողորմաբար բարեհաճում է ուշացնել ընտրութեան հաստատութիւնը։ Նրա ինչ փոյթն է, թէ Բաթումի եկեղեցին ամսից շատ աւելի է երէցփոխ չունի։ Հինը ժամանակը վաղուց լրացրած ու իր տեղը նորին ընտրված համարելով բնական է որ քաշվի գործից, նորն էլ դեռ հաստատված չը լինելով՝ քաշվում է գործի մտնելու։

Կօնսիստորը մտածում է արդեօք, որ ծննդեան տօներին երէցփոխանը շատ գործեր ունի կատարելու, և որ այդ տօներն արդէն ժամանած են գրեթէ։

**

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

I

Քանի տարուց աւելի է, որ մեր գաւառի շատ գիւղեր տալիս են Գանձակի Միքայէլեան արհեստաւորաց ուսումնարանին տարեկան վճար, իւրաքանչիւր ծխին 50 կոպէկ, բայց որովհետև մեր գիւղացիների երեխաներին շատ դժուարութեամբ են ընդունում և որովհետև ամեն գիւղում ծխական ուսումնարան են բացել և իրանք վերին աստիճանի աղքատութեան մէջ են, ամսիս 23-ին, այսօր, ժողով կազմեցին Ղալաչա գիւղում և խնդիր պատրաստեցին պ. Նահանգապետի անունով, որ իրանք այլևս անկարող են արհեստաւորաց ուսումնարանին ուսման վարձ տալ։

II

Ամսիս 23-ին միջնորդ հաշտարար պ. Օրլօվը Ղալաչա գիւղում կայացրեց ընտրութիւն. ընտրեցին Ղալաչա, Կոզը, Բարանա և Դըլիֆ գիւղերի համար տանուտէր պ. Արսէն Տէր-Ղազարեանցին առանց ռոճիկի։ Երեք տարի է, որ մեր գիւղացիք ռոճիկ են տալիս տանուտէրին—25 ր., գրագրին—30 ր., 2 ցըրիչներին—30 ր., դիւանատանը—20 ր., ծառային—6 ր., գումարը 101 ր.։

Ամեն ամառ գիւղացին պիտի տայ 101 ր. սրբունական հարկ, գիւղական ծախքեր, և այս բոլորը միանալով, իրար վրա բարդվելով մի այնպիսի ծանր բեռ է դառնում գիւղացու համար, որ նա տարիներ շարունակ տակին տքնում է։ Յիշեալ ռոճիկները վերցնելով և Գանձակի արհ. ուսումնարանի տուրքից ազատվելով գիւղացիք բաւականին թեթևութիւն կը զգան։

III

Այս տարվայ անբերրիութեան գլխաւոր պատճառն երաշտն էր, որը շարունակվում էր մինչև սեպտեմբերի վերջերը. հոկտեմբեր ամսին սկսեցին յորդ անձրևներ գալ, որից յետոյ մի քանի շաբաթվայ ընթացքում վարած արտերը կանաչով ծածկվեցին։ Դաշտերում մեծ քանակութեամբ մուկն է երևում, որ կանաչը հնձում է. վերջերս դաշտերում երևում են նաև մեծ թւով ակիւռներ, որոնք մկներին անխնայ կոտորում են։ Ձմեռը շատ մեղմ է անցնում ու խաղաղ. անցեալ տարվան բոլորովին հակապատկերը։ Գիւղացու ցանկութիւնն է խաղաղութիւն և իր աշխատանքի տէր դառնալ։

Մելքիսեդէկ քահանայ

Ղալաչա, 23 դեկտ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Անուխվա (Սուխ. շրջ.) դեկտեմ. 20-ին.—Եթէ ուշիմ կերպով հետևելու լինենք Սուխումի շրջանի ամբողջ հայ գիւղերին, կը տեսնենք, որ ոչ մի գիւղում այս տարի դպրոցական գործը այնքան առաջ չէ գնացել, ինչպէս Անուխաւայում, շնորհիւ բազմաչարչար հոգաբարձութեան և ջերմեռանդ ուսումնասէր ժողովրդի։

Անցեալ տարի Անուխաւան ունէր մի փոքրիկ դպրոց կոտրուած գրասեղաններով, իսկ այս տարի ունի մի այնպիսի դպրոց կանոնաւոր գրասեղաններով և բոլոր անհրաժեշտ պիտոյքներով, որի նմանը դժուար թէ այս շրջանի գիւղերում լինի։ Անցեալ տարի ունէր մի ուսուցիչ, իսկ այս տարի 2 ուսուցիչ և մի վարժուհի։ Անցեալ տարի աշակերտների թիւը հասնում էր 40-ի, իսկ այս տարի մօտ 100-ի։ Անցեալ տարիները խորթ էր թւում անուխաւեցուն աղջկանն ուղարկել դպրոց, իսկ այս տարի՝ ուղարկում է դպրոցական «փորմայ»-ով։

Շատ գիւղացիներ դեռ չեն մոռացել իրանց պապենական սովորութիւնը՝ «Մեր վարժապետը տիրացու էլ պիտի լինի. նա իր աշակերտներին «խաչի» արարարողութիւն էլ պիտի սովորեցնի»։ Եւ դրա համար իրանց դպրոցը դարձնում են «Տէր-Թօդիկեան», վարձելով իբրև ուսուցիչ տիրացուի մէկին։

Ցանկալի կը լինէր, որ այդպիսի գիւղացիները բարի նախանձով լցվէին դէպի անուխաւցինը և օրինակ վերցնէին նրանցից։

Թէև ամեն տարի այս շրջանում պակաս չէր աւազակների գողութիւնը, բայց այս տարի չափից դուրս սաստկացել է։

Խեղճ հայ գիւղացին աշխատում, քրտինք է թափում՝ առնում է մի լուծ եզ, որ նրանով մի տուն փիլփաթը կարողանայ պահել-պահպանել, սակայն դա նրան չէ աջողվում. գիւղացին դեռ մի շաբաթ լծած չէ լինում նոր առած եզները, ութերորդ օրը արդէն չը կան. աւազակները ամարդի կերպով գողանում, տանում մորթում են և խեղճ գիւղացու աղի-աղի արցունքները թողնում նրա արևառ երեսին։

Անցեալ օրերից մէկում գողացան տեղիս քահանայի կովը։ Հինգ օր կովը մնաց աւազակների ձեռքին։ Տէր-Թադէոս հօրը իմաց են տալիս, որ կովը այս ինչ աւազակն է գողացել. նա էլ գնում է աւազակի մօտ և ասում. «Ես իմացել եմ, որ կովս դու ես գողացել, սակայն աչքի առաջ ունեցիր, որ մէկի փոխարէն 4-ը կը տանեմ»։ Տէր հայրը վերադառնում է տուն. իսկ երեկոյեան կովը բառաչելով կանգնում է իր հին տիրոջ դռանը։ Միւս օրը տէր-հայրը ճանապարհին պատահում է նոյն աւազակին ասելով. «Հը՞, ինչու թողեցիր, մի՞թէ վախեցար». «Չէ, քէշիշ բաբա, ճիշտ է, գողացել էի, բայց ուղիղ սրտով չէի գողացել. ես հանաք էի արել, տեսնեմ թէ դու ինչ կասես»։ Առածն ասում է. «Զօրը գիրը վարում է»։ Տէր-հօրից վախեցան թողին, իսկ նրա փոխարէն խեղճ գիւղացունը այնտեղ է, էլի «կուժն ու կուլէն» խեղճի գլխին է կոտրվում։

Այս տարի ամեն գիւղից միջին թւով 800 րուբլու ապրանք կը լինեն գողացած էլ ինչ են անում՝ ցանել, հնձել, կալսել. հեշտ ու հանգիստ ապրում են։

Մօտ օրերս կառավարութիւնը բռնեց գողերի գլխաւորներից մէկին, որի մօտ բռնվել էր գողացված ձի։ Այժմ փոքր ինչ թուլացել են գողութիւնները։

Ի՞նչ անենք բռնվելը, քանի որ զանազան ստոր չինովնիկների կաշառք ուտեցնել և կարողանում են ազատվել։

Աղասաւեցի

ՆԱՄԱԿ ՆՈՐ ԲԱՅԱԶԷՏԻՑ

Դեկտեմբերի 18 ին

Երէկ, ամսիս 17-ին, հողին յանձնեցինք մեր քաղաքացի անուանի վաճառական Օհան Բուդումեանցի մարմինը, որը այս օրերս Թիֆլիսում վախճանվելով՝ բերել էին թաղելու իր հայրենիքում։ Հանգուցեալը յայտնի էր ոչ միայն մեր քաղաքում կամ մեր գաւառում, այլ և նա բաւական հռչակ ունէր Թիֆլիսում, յատկապէս վաճառականների շրջանում։ Նա մեծ բարիք է արել մեր քաղաքի շատ վաճառականների, դիւրութիւններ ներկայացնելով նրանց առևտրական զանազան գործերում, և շատ շատերը ժառանգ առևտրականներից, հանգուցեալ Բուդումեանցի շնորհիւ, «հացի տէր» են դառել և նիւթապէս կազդուրվել։ Այդ է պատճառը, որ նրա մահը զգալի է թէ քաղաքիս հասարակութեան և թէ շրջակայ հայ և թուրք գիւղացութեան համար։

Հանգուցեալին վերջին հրաժեշտը տալու և յուղարկաւորութեանը մասնակցելու համար հաւաքվել էր մեծ բազմութիւն թէ քաղաքացիներից և թէ շրջակայ գիւղերից, մանաւանդ որ «քելեխի» պատրաստութիւնը առատ էր ամեն կողմից... Ներկայ էին թաղմանը նաև թիւրք գիւղացիներ, որոնց հետ հանգուցեալը «դօստ» էր և առևտրական գործեր ունէր։ Յուղարկաւորութիւնը, յիրաւի, շատ շքեղ էր, միակ հանդիսաւոր թաղումը մեզանում, մանաւանդ որ թանկագին մետաղեայ դագաղի հետ բերված էին մի քանի շքեղ պսակներ Թիֆլիսից, որոնք մեր քաղաքի ժողովրդի հետաքրքրութիւնն աւելի էին շարժել։

Հանգուցեալի միակ որդին, Մոսկվայի համալսարանի ուսանող պ. Յ. Բուդումեանցը, որ եկել էր հօր թաղմանը հասնել, նուէր արեց 200 ր. հայոց ուսումնարանին, որի հոգաբարձութիւնը յայտնելով իր շնորհակալութիւնը, որոշեց մի ստիպէնդիա պահել ուսումնարանում հանգուցեալի անունով։ Ապա հանգուցեալի մեծ գործակատար պ. Մ. Կարապետեանցը իր սեփական միջոցներից խոստացաւ 5 խալվար (150 պ.) ցորեն բաշխել աղքատ գիւղացիներին՝ սերմանցուի համար։ Չը մոռանանք յիշել, որ մի քանի ամիս առաջ վախճանվեց նոյնպէս հանգուցեալի մեծ եղբայրը Խաչատուր Բուդումեանցը, որի ժառանգը նոյնպէս 200 ր. նուիրեց ուսումնարանին։ Եւ պէտք է ասել, որ Բուդումեանցները միշտ էլ իրանց օժանդակիչ ձեռքը մեկնել են դէպի բարի նպատակներ (օրինակ եկեղեցի, դպրոց և այլն)։

Բացի այդ նուէրներից Բուդումեանց ընտանիքը քելեխի մեծ պատրաստութիւն էր տեսել, մորթելով մեծ-մեծ եզներ՝ մսացուի համար, խալվարնելով հաց թխել, տակառներով գինի և արաղ գնել և այլն։ Մի խօսքով անհոգին ծախս, և այդ բոլորը բացէյայտ կորչում է աննպատակ։ Եւ թէև ննջեցեալի հոգու հաց տալու սովորութիւնը 10 տարուց աւելի է ինչ վերջացել էր մեզանում, իբրև ոչ գեղեցիկ մի սովորութիւն, սակայն վերջին ժամանակներս մի քանի ունևոր ննջեցեալների վերաբերմամբ նորից վերյուշեցին քելեխի արարողութիւնը։ Ուրիշ խօսքով այդ հանգամանքը այսպէս պէտք է բացատրել.—ով որ հարուստ է, մահից յետոյ ժառանգութիւն է թողել, նրա յիշատակը յարգելու համար ժառանգները քելեխ են տալիս, որպէս զի չամաչեն հասարակութիւնից կամ նրա բամբասանքից թէ՝ «հաց չը տուեցին իրանց ննջեցեալի հոգու փրկութեան համար»։ Միւս կողմից շատերը կարծում են, մանաւանդ կանանց դասակարգից, որ մի պատառ հաց՝ կանգնած տեղ՝ կերցնելով յուղարկաւորողներին և մի թաս արաղ խմցնելով նրանց՝ իրանց ննջեցեալը «դրախտի բաժին է լինելու»։ Տեղական երիտասարդութեանը դուր չեկաւ հաց տալու արարողութիւնը, ըստ որում ցանկալի կը լինէր, որ բոլորովին վերացվէր այդ սովորութիւնը մեզանից։

Որքան աննպատակ է քելեխի տալը, նոյնքան նպատակով է և գովելի պ. Մ. Կարապետեանցի նուէրը՝ 5 խալվար ցորենը՝ սերմի համար, որը աճելով կունենայ աւելի արդիւնք 30 խալվար, որ կարող է շատ չքաւորների արտասուքը սրբել։ Բայց մենք պարտաւորեցնում ենք նուիրողին, որ այդ սերմացուն ծառայէ իր բուն նպատակին, այն է բաշխվի յատկապէս ցանելու համար։

Որսորդ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Դեկտեմբերի 19-ին

Երկու օր առաջ պ. Ալ. Նանասեանը երեկոյեան ժամի 6-ին դռան զանգը տալիս՝ ոչ այնքան հեռւում կանգնած երկու պարոններից մէկը մօտենում է դռան և դաշոյնի մի հարուածով ծանրապէս վիրաւորում է Նանասեանին գլխից։

Անցեալ շաբաթ, երեկոյեան ժամի 6-ին, Լ. Բոչարեանը (վաճառական) տուն դառնալիս, գաւառական հաշտարար դատարանի առաջ մի քանի պարոններ դագանակի հարուածներ են տալիս նրան, որից տապալվում է գետին վիրաւորված գլխից։

Մի ամիս առաջ որդու ձեռքով գնդակի վէրք ստացած Սիմէօն Վաւեանը Բանանց գիւղում վախճանվել է։ Որդին բանտարկված է։

Ձեր թղթակիցը Ա. Ս...-ին իրան թոյլ էր տուել տեղական կեանքի երևոյթներից մի աննպաստ լուր տալու լրագրութեան, այդ պատճառով շահագրգռվածը կաշառել է մի չաթուքեանի, խոստանալով 300 րուբլի նրան սպանել տալու համար։ Նորերս վախճանված այդ չաթուքեանը իր մտադրութեան մասին յայտնել է երկու պարոնի, և վերջիններիս յանդիմանութեան շնորհիւ թղթակիցն ազատվել է այդ սպանութիւնից։

Մինչ թուրք-հայկական կոտորածը՝ հայերը թուրքի ձեռքով էին իրանց եղբօրը կոտորել տալիս, հիմա թուրքերի դերերը յանձն են առել հայ զանազան չաթուքեանները։

Սագան

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ

II

Գրադարան-ընթերցարան

1905 թւականի վերջերքում գիւղում ապրող մի խումբ աշակերտների մէջ միտք է յղանում հիմնել մի փոքրիկ գրադարան-ընթերցարան, որից կարողանային օգտվել թէ իրանք, աշակերտները, և թէ հասարակութեան միւս անդամները և որովհետև այդ աշակերտների մեծամասնութիւնը պատկանում էր Հ. Յ. Դաշն. աշակերտական միութեանը, այդ պատճառով էլ որոշվում է գրադարան-ընթերցարանը անուանել «Հ. Յ. Դաշնակցութեան աշակերտական միութեան Հայկական-գաղութի գրադարան-ընթերցարան»։

Բագուի գեներալ-նահանգապետից և Դաշնակցութեան Բագուի տեղական մարմնից (որին ենթարկվում է աշակերտական միութիւնը) իրաւունք ստանալով աշակերտները գլուխ են բերում իրանց ձեռնարկութիւնը և Հայկական գաղութում բացվում է առաջին կրթական հիմնարկութիւնը, ճիշտ է, չափազանց փոքրիկ, սակայն ապագայում մեծ յոյսեր խոստացող։

Պարզ է, որ իւրաքանչիւր փոքր ի շատէ կրթված մարդ, էլ առաւել իրանց «ուսուցիչ», «մանուկ սերնդի դաստիարակ» յորջորջող մարդիկ, պէտք է իրանց ամբողջ ոյժը գործ դնէին այդպիսի մի հիմնարկութեան գոյութիւնը ապահովելու համար, բայց վիրաւորված ինքնասիրութիւնը ոչ թէ միայն թոյլ չէ տալիս այդպիսի բան անելու, այլ մինչև անգամ ստիպում է հակառակն անելու, աշխատելով ամեն քայլափոխում խոչընդոտ հանդիսանալ այդ հիմնարկութեան զարգացմանը։ Այն հանգամանքը, որ իրանք լինելով գիւղի «տուղերը» և ամենակարող Դաշնակցութեան ներկայացուցիչները, մի խումբ «ինչ-որ աշակերտներ» առանց իրանց գիտութեան և հաւանութեան այդպիսի մի գործի են ձեռնարկում, բաւական է լինում թշնամաբար տրամադրելու նրանց դէպի այդպիսի մի հիմնարկութիւն և իրանց վիրաւորված եսասիրութեանը գոհացում տալու համար մեր պարոնները սկսում են հասարակութեան մեծ լուրեր տարածել, թէ այդ գրադարան-ընթերցարանը ս.-դեմոկրատներինն է*), թէ գործի գլուխ են կանգնած մի խումբ «տգէտ» աշակերտներ (!). և նրանցից ոչինչ լաւ բան չի կարելի սպասել, և այլն և այլն... Այդ բաւական չէ, մեր «գործիչները» դիմում են մինչև անգամ աւելի գործնական միջոցների. գրադարան-ընթերցարանը ստանում է ձրիաբար մի մի օրինակ տեղական) «Баку», «Каспій» և «Трудовая Жизнь» (այժմ դադարած) թերթերից. և ահա մի գեղեցիկ օր այդ խմբագրութիւններին յայտնվում է, որ վերոյիշեալ գրադարան-ընթերցարանը մասնաւոր ձեռնարկութիւն է, որպէսզի խմբագրութիւնները դադարեն իրանց թերթերը ձրիաբար ուղարկելուց... Սակայն դրա առաջը շուտով առնվում է, և թերթերը ստացվում են անդադար։ Այդ բոլոր անպատիւ միջոցների մէջ ուշադրութեան արժանի է հետևեալ փաստը. մի պարոն նուիրում է «Երմանի-քեանդի գրադարան-ընթերցարանին» անունով մի քանի հարիւր կտոր զանազան գրքեր։ Այդ գրքերը մի քանի ամիս այստեղից այնտեղ են քարշվում և չը նայած որ գրադարան ընթերցարանի վարչութիւնը քանիցս դիմում է ստանալու համար, բայց և այնպէս, ամեն անգամ զանազան պատճառներ հնարելով, մեր պարոնները այնքան են ձգձգում, որ այդ ժամանակամիջոցում մեռնում է նուիրատուն. այնուհետև գրքերը տեղափոխում են Երմանի-քեանդի և աշակերտներին յայտնում, թէ այդ գրքերը նուիրված են «Երմանի-քեանդի հասարակական գրադարան-ընթերցարանի» անունով, իսկ իրանցը «հասարակական» չէ, այլ «աշակերտական», հետևապէս յանձնել չեն կարող..

Մինչև այժմ էլ, Երմանի-քեանդի սենեակներից մէկի անկիւնում կարելի է տեսնել անկանոն, միմեանց վրայ խառն ի խուռն թափված և արդէն ցեցերի կերակուր դարձած գրքերի այդ կոյտը...

Իսկ աշակերտական գրադարան-ընթերցարանը չը նայելով այդ բոլոր խոչընդոտներին շարունակում է իր գոյութիւնը և, այժմ էլ Դաշնակցութեան օպեկայի տակից դուրս գալով, շարունակում է իր օգտակար գործունէութիւնը «Հայկական գաղութի գրադարան-ընթերցարան» անուան տակ։

Բայց «ցեցերը» չեն քնում. որպէսզի գրադարան-ընթերցարանը բոլորովին տապալեն, նրանք արդէն ձեռնարկում են մի երկրորդ դուռ «դաշնակցական-հասարակական» (իրանց ասելով) գրադարան ընթերցարանի հիմնարկութեան, և երևի շուտով փոքրիկ Երմանի-քեանդը կունենայ երկու միմեանց հակառակ գրադարան-ընթերցարան. .

Առաջադիմութեան նշաններ են...

«Ազգերնիս կը յառաջադիմէ կոր»։

Վ. Դիմաքսեան

(կը շարունակվի)

---

*) Կարծես թէ ս.-դեմոկրատներինը լինելով գրադարան-ընթերցարանը Ս. Դ. գաղափարը պէտք է քարոզէ։

ԷՋՄԻԱԾՆԻ ՇՈՒՐՋԸ

(Նամակ խմբագրութեան)

Էջմիածնում սովոր չեն, որ գործ կատարվի առանց ինտրիգների, առանց ձգձգելու, մանաւանդ թշնամու, կտրուկ ու անխտրական կերպով գործողների։

Արարատեան դաշտը ռուսների տիրապետութեան շնորհիւ նորից հայաբնակ դառնալու օրից Էջմիածնին շրջապատող հողերի ոռոգման խնդիրը Էջմիածնի մէջ գոյութիւն ունի։ Հանգուցեալ Գէորգ IV-ի ժամանակ տասնեակ հազարներ ծախսվեցին Երևանի Զանգի գետից ջուր բերելու և, միմիայն չորս հազար րուբլու համար, համարեա վերջացրած գործը քանդեցին և կորցրեցին այդ ջրի իրաւունքը, որ շատ դժուար է այսօր նորից ստանալ. մի քանի տարի առաջ Երեմիա սրբազանի տեղապահութեան օրով նորից տասն հազարի չափ ծախսվեց Սև ջրի ակունքներից ջուր բերելու, բայց դժբաղդաբար ապարդիւն։

Նոյնպէս վարվել են Էջմիածնում և էլեկտրական լուսաւորութեան վերաբերմամբ։ Մի քանի անգամ Էջմիածին են հրաւիրվել զանազան անձինք, նրանց ճանապարհածախս է տրվել և ոչինչ չէ դուրս եկել։ Այսքան ծախսեր եղել են, և ոչ ոք Էջմիածնում չէ խօսել, որովհետև ուրախ են եղել, որ գործ չէ արվել։

Բայց եթէ գործ է շինվում, իսկոյն գտնվում են պառաւական բամբասանքներով օրն ի բուն զբաղված աբեղաներ, որ սկսում են անփաստ, անտեղի և միանգամայն կեղտոտ զրպարտութիւններ հնարել այս կամ այն անձի վերաբերութեամբ։

Տարիների ընթացքում Բիշենեվի կալուածքը շատ չնչին եկամուտ էր բերում, բայց վերջին տարիները աճող գնով էր տրված։ Այս պայմանագիրը այժմ կապալառուն չէ կարողանում կատարել, բայց այդ պայմանագրի հետ կայ և մի այլ պայման, ուստի խնդիրը շատ էլ հեշտ չէ միանգամից վճռել։ Իմ խորհրդով երկու անգամ Թիֆլիս խորհրդակցութիւն կազմվեց խնդիրը ուսումնասիրելու համար, որպէս զի սխալ քայլ արած չը լինի Էջմիածինը, բայց վանքում նստած բամբասասէր մի երկու աբեղաների թելադրութեամբ սուտ և միանգամայն անհիմն հեռագիրներ լոյս տեսան «Երկիր» թերթում, թէ սինոդը իմ ազդեցութեան տակ վճռել է հարիւր վաթսուն հազար րուբլի տալ կապալառու Բէյգելին։ Երբոր ես առաջարկեցի տպագրել սինոդի վճիռը՝ «Երկիր» թերթի խմբագրութիւնը քաջութիւն չունեցաւ իր ստախօս թղթակցի վարմունքը հրապարակօրէն դատապարտելու։ Այդ թերթի անգործ և բամբասասէր թղթակիցը այժմ զբաղված է ստեր հնարելով էլեկտրական լուսաւորութիւն կառուցանող ինժեներ Կիրակոսեանի դէմ։

Մի քանի օր առաջ «Երկիրը» տպագրեց մի հեռագիր Էջմիածնից, թէ ճեմարանի աշակերտները ջուր չունին, իսկ Կիրակոսեանը 10,000 ր. առաջուց փող է ստանում։ Էլեկտրական կայարանը պատրաստ է սեպտեմբեր ամսից, և Կիրակոսեանը ուղարկել է մեքենաներ և մթերք 30 հազարից աւելի արժողութեամբ և մինչև այսօր էլ դեռ չէ ստացել իր ծախսած փողը. ուրեմն ինչ խօսք կարող է լինել «աւանսի» կամ նախապէս փող ստանալու մասին։ Երկրորդ՝ ինչ կապ կայ ճեմարանի ծախսերի և էլեկտրական լուսաւորութեան համար կապված պայմանի հետ. միթէ եթէ ճեմարան կայ՝ Էջմիածինը այլ և ոչ մի ուրիշ գործ չը պիտի կատարէ։

Դեռ մայիս ամսին ճեմարանի աշակերտների համար մահուդ էր բերված. ինչու համար ճեմարանի վարչութիւնը իր ժամանակին դերձակներ չէր վարձում և շորեր կարել տալիս։

Մեզանում առհասարակ սովոր չեն մաքուր և համոզմունքով գործ անող տեսնելու, ուստի և ամեն գործում այդ մարդիկ իրանց պատկերն են տեսնում, կաշառք, գողութիւն, գաղտնի կերպով պաշտօնների ձգտել են ուրիշների մէջ փնտռում, այսինքն ինչ որ իրանք են անում։ Բայց գլխաւորը նա է, որ մէկը տպարանի հաշիւ չէ ներկայացնում, թէև սինոդը պահանջում է, միւսի դունչը ներկված է Նախիջևանի տասապետներին ուղարկված փողերի մրով, երկրորդը կալուածները խլած ժամանակ եկեղեցական փողեր է ստացել և հաշիւը շատ համառօտ է ներկայացնում, բայց տեսէք, որ հէնց այս մարդիկ են գլխաւորապէս ուրիշների գործունէութեան մէջ կեղտ փնտռում։

Սա հոգեբանօրէն շատ բնական է, որ մարդիկ ուրիշներին իրանց յատկութիւններով են դատում, բայց ինչ որ կանցնի Էջմիածնի պատերի տակին խօսված բամբասանքների մէջ՝ նոյնը անպատիժ կարող է չը մնայ, երբ որ պառաւական ասէ-կոսէներով աբեղաները յանդգնում են առանց ապացոյցի հրապարակում յիմարաբար դուրս տալու։ Վերջին ժամանակներում Էջմիածնի ս. սինոդը սկսել է առանց երկարացնելու մարմնաւոր իշխանութեան և դատարանական պրօկուրօրին հաղորդելու այն պաշտօնեաների զանցառութիւնների և զեղծումների մասին, որ մտնում են սինոդ. և պէտք է կարծել, որ շուտով շատ մարդկանց դէմքերը կը պարզվեն, որոնք սովոր են իրանց աչքերի մէջ գերանը չը տեսնելու։

Գ. Ենգիբարեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 23 դեկտեմբերի

Խնդրում եմ տեղ տալ «Մշակում» այս նամակիս, որի մէջ շօշափված նիւթը, կարծում եմ, ոչ այնքան անձնական, որքան հասարակական նշանակութիւն ունի, իբրև մի օրինակ մեր մէջ տիրող գրական բարքերի։

«Երկիր» լրագրի № 42-ում (17-ից նոյեմբերի) երևաց մի յօդուած, որի հեղինակը, «Ռոստոմ» ստորագրութեամբ, մէջ բերելով գիւղացիների գանգատները և հիմնվելով նրանց վրայ՝ վիրաւորական ակնարկներ է անում Ախալցխայի մօտ գտնվող Դիպակ կալուածքի վեց տէրերից երեքին, որոնց թւում և ինձ վրայ։

Լսելով այս յօդուածի մասին և համարը ձեռք բերելով ու կարդալով՝ ես պարտք համարեցի նոյն «Երկրի» մէջ պատասխանել։ Պատասխանս, որ խմբագրութեան յանձնեցի նոյեմբերի 24-ին, տպվեց նոյեմբերի 30-ին և դեկտեմբերի 1 ին (№№ 51, 52)։ Իմ պատասխանի մէջ ես յայտնել էի, որ պ. Ռոստոմի բերած մեղադրանքներից ճիշտ են միայն չորսը, որոնց մասին և տուել էի բացատրութիւն, իսկ մնացած մեղադրանքները յայտարարել էի սուտ կամ զրպարտիչ չափազանցութիւն։ Յայտնել էի նաև, որ ես պատրաստ եմ պ. Ռոստոմին ամեն տեսակ միջոցներ տալ՝ իմ բոլոր գրածներն ստուգելու դօկումենտներով, վկաներով, հաշիւներով։

Պ. Ռոստոմը «Երկիր» № 57-ում (դեկտ. 8-ից) ինձ պատասխանեց։ Իբրև ապացոյց իր մեղադրանքների ճշմարտութեան՝ նա զետեղեց իր պատասխանի մէջ երկու նամակ, գրված մէկը՝ Ախալցխայից, նոյեմբերի 29-ից, մի քաղաքացու կիսատ ստորագրութեամբ, միւսը Սաղէլ գիւղից, նոյեմբերի 30-ից, մի գիւղացու ստորագրութեամբ, և նկատել, որ այդ նամակների յայտնածները և իմ պնդումները բոլորովին հակասում են միմեանց, տարակուսելով թէ ում պէտք է հաւատալ՝ առաջարկեց մի միջոց—կազմել Ախալցխայում երկու կողմերի ձեռնհաս անձնաւորութիւններից մի մարմին, որը քննելով գործը իր բոլոր մանրամասնութիւններով՝ իր եզրակացութիւնները յայտնէր հրապարակով։ Այդտեղ էլ կը պարզվէին պ. Մալխասեանի տուած բացատրութիւնները ճիշտ համարված կէտերի վերաբերմամբ։

Յաջորդ օրը, դեկտեմբերի 9 ին, ես տարայ «Երկրի» խմբագրատունը իմ պատասխանը այս նամակին։ Իմ պատասխանի մէջ ի միջի այլոց գրել էի. «Ես անչափ շնորհակալ եմ պ. Ռոստոմից, որ տպագրութեան է յանձնել այս՝ շատ տեսակէտներից հետաքրքրական նամակները (Ախալցխայից և Սաղէլից), որոնց քննութիւնը շատ բան կը պարզէ։ Առ այժմ ես յայտարարում եմ, որ քիչ է «սուտ և զրպարտութիւն» անունը*) դրանց համար, այլ առաջին նամակը լրբենի սուտ է, իսկ երկրորդ նամակը՝ ստախօսան ու խեղճ խեղաթիւրում»։

Այնուհետև մէջ բերելով բառացի պ. Ռոստոմի առաջարկած «միջոցը»—ձեռնհաս անձնաւորութիւններից մի քննող մարմին կազմելու մասին՝ ես գրել էի իմ պատասխանի մէջ հետևեալը. «Ես ամենայն յօժարութեամբ ընդունում եմ պ. Ռոստոմի առաջարկած միջոցը, և հետևեալ պայմաններն եմ դնում. 1) Քննութեան պէտք է առնուեն առաջին նամակում բերված մեղադրանքները, և ոչ թէ երկրորդում ամփոփվածները, որովհետև այս ամփոփումները մասամբ թերի են և մասամբ անճիշտ. 2) քննութեան պէտք է առնվեն պ. Ռոստոմի երկրորդ նամակի մէջ զետեղված վերոյիշեալ երկու նամակները. 3) բացի վերոյիշեալներից՝ քննութեան պէտք է առնվին և իմ բացատրութիւնները այն մասին, թէ ինչպէս ենք մենք վերաբերվել դէպի գիւղացիները. և ինչպէս նրանք դէպի մեզ... Այս քննութիւնը կատարելու համար, ես Ախալցխայում կամ Դիպակում պ. Ռոստոմի տրամադրութեան տակ եմ դեկտեմբերի 27-ից մինչև յունվարի 3 ը»։ (Համառօտութեան համար, ես միայն ամենաէական մասերն եմ բերել այստեղ ինչպէս իմ, այնպէս և պ. Ռոստոմի երկու նամակներից, բաց թողնելով ուրիշ շատ հետաքրքրական կէտեր)։

Այդ նամակս յանձնելով «Երկրի» խմբագրութեան՝ ես համոզված էի, որ նա կը տպվի, բանակռիւները կը դադարեն, մինչև որ «քննող մարմինը» իր եզրակացութիւնները հրատարակէ։ Բայց այսպէս չեղաւ։

Իմ նամակը յանձնելուց 5 օր յետոյ՝ դեկտ. 14-ին, «Երկրի» № 61-ում տպագրվեց մի նամակ պ. Աւ. Իսահակեանի։ Պարոնը, «որպէս քիչ շատ ծանօթ» Դիպակ կալուածի խնդրին, որը յարուցել էր «ընկեր Ռոստոմը»՝ պարտք է համարում վկայել, որ 1905 թւի մայիսին, որոշ գործով Ախալցխա եղած ժամանակ, գիւղացիները տասնեակներով եկել են նրա մօտ և պատմել են նրան այն ամենը՝ ինչ որ ընկեր Ռոստոմը գրել էր (և թւում է մի մասը այն ծանր մեղադրանքներից, որ պ. Ռոստոմը բարդել էր մեր վրայ)։ Պ. Իսահակեանը ինձ յիշեցնում է այն խօսակցութիւնը, որ ունեցել ենք մենք իրար հետ Ախալցխայի հասարակական պարտիզում, ուր ինքը թւել է գիւղացոց բողոքները և ես «աշխատում էի արդարանալ»։ Իր նամակի այս փաստական մասը պ. Իսահակեանը համեմում է մի շարք licentia poetica-ներով—հեգնութիւններով, վիրաւորանքներով՝ մինչև անգամ, յիրաւի համեստ ակնարկով. հասկացնում է, որ ես իմ կեանքս պարտական եմ իրան, բայց այնքան ապերախտ եմ, որ իր շնորհիւ կեանք և արև վայելելով դարձեալ «իմ հայկական հոլովը գործ եմ դնում գիւղացիների ջանին»։ Sapienti sat!

Տակտի և վայելչութեան այս գոհարների փայլը ես չեմ նսեմացնի իմ պատասխանով։ Բայց իմ կողմից յիշեցնում եմ պ. Իսահակեանին մի բան, որ աւելի կարևոր է քան իր բոլոր գրածները և որ նա պարտաւոր էր յիշել իր նամակում։

Ախալցխայի հասարակական պարտիզում տեղի ունեցած մեր խօսակցութեան ժամանակ ես նրան առաջարկեցի, որ յաջորդ օրը գայ մեր կալուածը, հրաւիրենք երեք գիւղերից ներկայացուցիչների, խօսենք դէմ առ դէմ, որպէսզի ինքը, պ. Իսահակեանը կատարեալ գիտակցութիւն կազմէ, թէ որքան ճիշտ են գիւղացոց գանգատները և ով է իսկապէս արդարը, գիւղացիք թէ մենք։ Պ. Իսահակեանը խոստացաւ գալ. մարդիկ ուղարկվեցին քաղաքում գտնվող գիւղացիներին իմաց տալու այս մասին, յաջորդ օրը ես և գիւղացոց ներկայացուցիչները կալուածում երկար սպասեցինք պ. Իսահակեանի գալուն, բայց պ. Իսահակեանը չեկաւ։

Պ. Իսահակեանի գալը կամ չը գալը երկրորդական բան է, Գլխաւորն այն է, որ նա այն ժամանակ, իմ առաջարկութեամբ, հարկ համարեց ստուգել գիւղացոց բողոքները դէմ յանդիման բացատրութիւններով, բայց չը ստուգեց, իսկ այժմ այդ չը ստուգված, ուրեմն և միակողմանի և անարժէք վկայութիւններով նա գալիս է հաստատելու պ. Ռոստոմի մեղադրանքները, որոնք հիմնված են միևնոյն աղբիւրից բղխած և նոյնչափ միակողմանի ցուցումների վրայ։

Պ. Աւ. Իսահակեանի այս նամակը իմ մէջ վրդովմունք առաջացրեց «Երկրի» խմբագրութեան վարմունքի դէմ։ Այդ խմբագրութիւնը հինգ օր իր ձեռքի տակ ունէր իմ նամակը, որը կարդացել էր և գիտէր, որ ես ընդունում եմ պ. Ռոստոմի առաջարկը՝ մանրամասն քննութիւն կատարել նրա յարուցած հարցի առիթով, որ ես նոյնիսկ քննութեան օրերն էլ նշանակել եմ և ինձ դրել պ. Ռոստոմի տրամադրութեան տակ, բայց փոխանակ այս նամակը հրապարակ հանելու, ինչպէս արդարութիւնը և իմ իրաւունքը պահանջում էին, տպեց մի ուրիշ նամակ, որ ոչ մի նոր փաստ չէր պարունակում, այլ վիրաւորանքներ, հեգնութիւններ և քօղարկված սպառնալիք։ Եթէ մինչև անգամ խմբագրութեան կարծիքով, այդ նամակը նոր փաստ պարունակեր՝ դարձեալ խմբագրութիւնը—եթէ կամենում էր կօրրեկտ լինել—չը պիտի տպէր, այլ պիտի յանձնէր կազմվելիք քննիչ մարմնին, որովհետև, կրկնում եմ, քննութիւն նշանակելու համաձայնութիւնը կայացնելուց յետոյ այլևս որևէ բանակռուի տեղիք չէր մնում։

Այս նամակը կարդալով՝ ես վերջնապէս համոզւայ, որ աւելորդ է «Երկրի»-ի մէջ և «Երկրի»-ի դէմ բանակռիւ մղել պ. Ռոստոմի յարուցած հարցի առիթով՝ ուստի նոյն օրն և եթ գնացի յետ վերցնելու չը տպված նամակս։ Խմբագրի պաշտօն կատարող անձը, ներս մտնելուս պէս, ինձ ասաց. «Լաւ որ եկաք, պ. Մ., պօստ-արկղով ձեզ ուզում էինք յայտնել, որ ձեր նամակը կրճատէք, շատ երկար է տպագրելու համար. ահա, տեսէք»։ (Գրասեղանի վրայ յիրաւի դրված էր այս բովանդակութեամբ պօստ-արկղի պատասխան գրված մի թուղթ)։ Ես յայտնեցի, թէ եկել եմ ոչ թէ պատասխանս կրճատելու, այլ յետ վերցնելու, որ խմբագրութեան ոչ-կօրրեկտ վարմունքից յետոյ այլևս հնարաւոր չեմ համարում «Երկրի» մէջ պատասխանս տպագրել։ Խնդրեցի որ պատասխանիս վրայ մակագրեն, թէ խմբագրութիւնն ստացել է դեկտեմբերի 9-ին։ (Տեղի ունեցած բաւական երկար խօսակցութիւններ, իբրև գործին չը վերաբերող, բաց եմ թողնում)։ Պատասխանս, իմ ցանկացած մակագրութեամբ, յետ ստացայ դեկտեմբերի 16-ին։

Այս բացատրութիւնը տալուց յետոյ ես այլևս կարիք չեմ զգում պ. Ռոստոմի և իր ընկերների վերաբերմամբ գործածած մեղադրանքի խօսքերը իրանց իսկական անունով կոչելու։ Եթէ պ. Ռոստոմը, որ անշուշտ ծանօթ է և իմ երկրորդ (չը տպագրված) նամակի բովանդակութեան, կը զգայ որ պարտաւոր է հրապարակով յետ վերցնել իր մեղադրական խօսքերը՝ սրանով նա իր պատիւը կը վերականգնէ։ Իսկ եթէ նա անտարբեր կը մնայ իր այս բարոյական պարտականութիւնը կատարելու՝ դրանով ինձ իրաւունք կը տայ իր խօսքերից չը վիրաւորվելու։

Ստ. Մալխասեանց

---

*) Պ. Ռոստոմը յիշեալ երկու նամակները տպելով գրել էր. «Սուտ է, զրպարտութիւն է», կը գոչէ Մալխասեանը։

Թիֆլիս, դեկտեմբերի 28-ին

Խնդրում եմ տեղ տալ հետևեալ երկտողին։ Դեկտեմբերի 27-ին 6-րդ քաղաքամասում «Հերակլի» բաղնիսում տեղի է ունեցել հետևեալ ուշագրաւ դէպքը։ Երկու հայեր մտնում են լողանալու ընդհանուր բաժանմունքը։ Այն ժամանակ, երբ նրանցից մէկը քիսա է եղել քսվում, ներս է մտնում մի թուրք քիսա քսվելու և պահանջում է վեր կենալ տեղից, ասելով որ «այդ իմ տեղն է»։ Քիսա քսվողը պատասխանում է, որ վերջացնելուց յետոյ վեր կը կենայ։ Թուրքը խիստ կերպով պահանջում նորից, և երբ հայը հրաժարվում է կատարել, թուրքը սկսում է հայհոյել ու ծեծել։ Այդ բանից աղմուկ է բարձրանում և աննկարագրելի իրարանցում սկսվում։ Բաղնիսում եղող մարդիկ սարսափահար այս ու այն կողմ են փախչում։ Բարեբախտաբար ներս է մտնում մի թուրք և ապտակելով յիշեալ թուրքին դուրս է անում բաղնիսից։ Դրսում Ալի Բալան և Հուսէին Գարբօվը դէպքի մասին իմանալով իսկոյն բռնում են խռովարար թուրքին և խիստ ծեծի ենթարկում, պատուիրելով որ այդպիսի պրովօկացիա էլ չանի։

Պօղոս Ասլանեան

Ղարաքալէ գիւղ, դեկտեմբերի 19-ին

«Մշակի» 269 համարում «Կենտրոնական Նըպաստամատոյց Յանձնաժողովի գործունէութեան մասին» յօդուածում պ. Հ. Ա. գրում է, որ ես իմ յաջորդ Լևոն վարդապետին յանձնել եմ միայն 1000 րուբլի։ Դա սխալ է.—իմ յանձնածս եղել է 2000 ր., ինչպէս երևում է իմ՝ «Մշակի» 215 համարում լոյս տեսած մուտքի հաշուից և նոյն թերթում Լևոն վարդապետի ներկայացրած մի հաշուից։

Երկրորդ՝ իմ՝ պ. Հ. Ա.-ի յիշած պատասխանս թէև յղված չէ, բայց Գարեգին եպիսկոպոսին այդ պատասխանից մի քանի օր առաջ՝ սեպտեմբերի 18 ին, գրել եմ. «Վերջին անգամ դիմում եմ բարձր սրբազնութեանդ և խնդրում եմ, այդ մասին յայտարարելով վերոյիշեալներին (խմբագիրներին) և Յանձնաժողովին, պահանջել ցուցակի տպագրութիւնը, որպէս և պատասխանները, որից յետ նաև ծախուց ցուցակի, որ անմիջապէս կուղարկեմ մուտքի լոյս տեսնելուց յետոյ»։ Չեմ կարծում, որ պ. Հ. Ա.-ին յայտնի չը լինի այդ, որպէս Յանձնաժողովի քարտուղարի, խոստումս ես կատարել եմ և նոյեմբերի 14 ին մնացած մուտքը, որպէս և ելքը, ամբողջապէս մի նամակով ապահովագրած ծրարով (Кв. № 609) ուղարկել եմ «Մշակ»-ին, բայց մինչև օրս լոյս չէ տեսել. այս ես չեմ կարծում, թէ անյայտ լինի պ. Հ. Ա ին, որպէս «Մշակի» մշտական աշխատակցի և կառավարիչ մի անձի։

Իմ՝ յիշված պատասխանում ասել էի, որ Յանձնաժողովը կարող է գործադրել իր սպառնալիքը և դիմել ուր որ կամենայ. ես պատրաստ եմ ճակատաբաց կանգնել դատաստանի առաջ, ուստի և սպասում էի որևէ մարմնաւոր դատարանի հրաւիրաթղթի (повѣстка). սակայն ցաւօք սրտի կարդացի պ. Հ. Ա.-ի յօդուածում, որ բողոքված է ս. սինոդին, այսպէս յանձնված է հոգևոր դատարանի. ցաւում եմ նրա համար, որ այդ դատարանով ես հնարաւորութիւն չեմ ունենայ ապացուցանել այն կեղծ (պաղլօզ) բողոքները և գրութիւնները, որոնք լցված են «Մշակի» խմբագրատանը և Յանձնաժողովի գործերում և ժամանակաւորապէս արատաւորել են իմ անբիծ անունը և ծառայութիւնս, որի համար կը վկայեն այն բոլոր հասարակութիւնները և հիմնարկութիւնները, որոնց մէջ ես ծառայել եմ 15 տարի։

Յանձնաժողովը ինձանից ոչ մի հաշիւ չէ պահանջել մինչև պ. Հ. Ա.-ի սպառնալից նամակ-գրութիւնը սեպտ. 16-ից։ Արդարև ես խոստացել եմ գ. Գարեգին սրբազանին հաշիւ ուղարկել, որովհետև Թիֆլիս եղածս ժամանակ, չը նայելով իմ դիմումին թէ սրբազանին, որի մօտ մտել եմ ելեմտից տոմարով, և թէ խմբագրատան՝ պ. Քալանթարին, սակայն ոչ ոք հաշիւ ստանալու ժամանակ չունեցաւ. իսկ ես մի քանի օր հիւրանոցում ապրելու ոչ աւելորդ դրամական միջոց ունէի և ոչ էլ ի զուր վատնելու ժամանակ։ Գալով Ղզլար ես շտապեցի դնել հաշիւս հասարակութեան առաջ, սակայն ոչ ժամանակի «Ալիք-Զանգ»ը և ոչ էլ «Մշակը» միջոց տուին սկսածս հաշուետուութիւնը լոյս տեսնելու։ Իմ որոշումս.—Նախ հրապարակով հասարակութեան և ապա Յանձնաժողովին տալ հաշիւը, մանաւանդ որ Յանձնաժողովի կողմից, ինչպէս ասացի, պահանջ չէր եղել, պատճառ եղաւ իմ խոստումս չը կատարելու։ Այժմ կը սպասեմ ս. սինոդի պահանջին, որին երևի կը խնդրեմ յանձնել պահանջը մարմնաւոր դատարանին։

Թովմա վարդապետ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Զօրաննէքի տօնին չքաւորներին բաժանելու համար ստացանք մի անձից 10 րուբլի։

Շուշու աղէտից վնասված հայերի օգտին ստացանք մի շուշեցի պարոնից 25 րուբլի։

Ստացանք պ. Իսահակ Թաղէոսեանից 30 րուբլի գումար զանազան գիւղեր և հաստատութիւններ «Մշակ» ուղարկելու համար։

Դեկտեմբերի 27-ին, ցերեկվայ ժամը 2 ին Միսիօներական եկեղեցու միաբան Գորոզէյէվ քահանան իր կնոջ հետ միասին կառքով անցնելիս է եղել Միլիւտինսկի փողոցով։ Դէպի Նիկոլայէվսկի փողոցը շրջման տեղում մօտ է վազում մի անյայտ չարագործ և ետևից կրակում է ատրճանակից։ Գնդակը ծակելով մէջքը խրվում է փորի մէջ։ Վիրաւորված Գորոզէյէվ քահանան ընկնում է կառքից գետին. այն ժամանակ չարագործը նրա վրայ կրակում է մի անգամ ևս և վիրաւորում է ուսը, որից յետոյ հեռանում է վիրաւորվածի մօտից։ Հէնց այդ րոպէին դէպի Գորոզէյէվը շտապում է երկրորդ չարագործը և կամենում է կրակել նրա վրայ, սակայն, նկատելով պահակատեղի թաղային վերահսկիչին և ոստիկանին, դիմում է փախուստի Նիկոլայէվսկի փողոցով, հետապնդվելով վերջիններից։ Ցանցառին բռնում է թաղային վերահսկիչը Թիֆլիսի 15-րդ գրենադերեան գնդի զինւորների օգնութեամբ։ Բռնվածը երևաց Թիֆլիսի գաւառի ազնուական Նիկոլայ Բիլանովը։ Խուզարկութեան ժամանակ նրա մօտ գտնվել է «նագան» սիստեմի ատրճանակ չարձակված փամփուշտներով։ Ձերբակալվածը ուղարկված է կօմենդանտական վարչութեանը։

Մօտ օրերս, Թիֆլիսում նստող պարսից գեներալ հիւպատոսի նախագահութեամբ կայացել է տեղիս մահմեդականների ժողով՝ մահմեդական ակումբ հաստատելու հարցի մասին խորհրդակցելու համար։ Ընտրվել են 11 անդամներ, որոնց յանձնարարված է մի յարմար տեղ փնտռել ակումբի համար քաղաքի կենտրոնական մասում և առհասարակ անել այն անհրաժեշտ կարգադրութիւնները, որոնցով կարելի է մօտիկ ապագայում իրականացնել այդ հարցը։ Կենդանի վէճի առիթ է տուել ակումբում կանանց ևս թոյլատրելու հարցը։ Այս հարցը, շնորհիւ մի քանի ինտելիգենտ անձանց, վճռվում է դրական մտքով։ Տարեկան վճարը լինելու է 15 րուբլի։ Ակումբին կից բացվելու է նաև գրադարան-ընթերցարան։

Այսօր, դեկտեմբերի 29-ին «Кавказъ» լրագրում կը յայտարարվի Պետական Դումայի ընտրութիւնների Թիֆլիսում մասնակցող անձերի ցուցակը։

Թիֆլիսի նահանգապետը ուղարկել է Թիֆլիսի նահանգի քաղաքային ոստիկաններին՝ ղեկավարվելու և գործադրելու համար սոյն դեկտեմբերի 18 ին, Կովկասի Փոխարքայի անունով ստացված ներքին գործերի մինիստր Կրիժանովսկու հեռագրի պատճէնը, որ վերաբերում է Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելու նկատմամբ այն անձանց, որոնք բնակարաններ վարձելով չեն ապրել քաղաքում վերջին տարին։

Մեզ խնդրում են յայտնել, որ այսօր, դեկտեմբերի 29 ին, երեկոյեան ժամի վեց և կէսին, կը կայանայ Թիֆլիսի գործակատարների փոխադարձ ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովը ընտրելու է հոգաբարձական խորհուրդ ընկերութեան առևտրական դասընթացքի համար։

Դեկտեմբերի 25-ին Նախալովկայում անյայտ չարագործներ մտել են Տ. Վարդանեանի բնակարանը և փայտով ծեծել են։ Յետոյ դրել են նրան կառքը և տարել։ Ահա մի քանի օր է, որ նրա ամուսինը փնտռում է նրան։

Դեկտեմբերի 8 ին Բարօնսկի և Վանքսկի փող. անկիւնում Սալինեանի տան դիմաց չարագործները ատրճանակի հարուածով ձախ ոտից վիրաւորել են Ասլան Առաքելեանին։ Չարագործները կարողացել են փախչել։

Դեկտեմբերի 27-ին, երեկոյեան 6 ժամին, գորոդովոյը գտել է տեղացի Սոֆիա Փիրումեանի դիակը, վիզը կտրած և դաշոյնով մի քանի տեղից վիրաւորված։ Փիրումեանի բնակարանը մտնելիս, սանդուղի վրայ գտնվել է դաշոյն։ Քննութիւնից երևացել է, որ տիկնոջը սպանողը նրա ամուսինն Գէորգ Փիրումեանն է, որից տիկինը մօտ 3 տարի է բաժանվել է Փիրումեանին ձերբակալելու համար միջոցներ են ձեռք առնված։

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը մի կոնդակով թոյլատրել է Սալմաստի հայ ժողովրդի ներկայացուցիչներ Գասպար Յովհաննիսեանին և Ստեփան Յովհաննիսեանին, ուշադրութեան առնելով Ատրպատականի հայոց թեմական խորհրդի միջնորդութիւնը, ժողովարարութիւն անել Ռուսաստանում, յիշեալ գիւղախմբի «Հին քաղաք» կոչվող թաղատասում կառուցվող ս. Յակոբ եկեղեցու աւարտման ծախսերի համար:

—

Թաղա մէջլիզ Թաղի ներկայացուցիչներ՝ Միր Ալի Աքբար Աղա Հասիմ օղլուի, Ամիր Համզա Ամիր Ասլանովի և Մուհամէդ Բուսուլ բէգ Րէչէբ բէգ օղլուի կողմից հետևեալ խնդրագիրն է ստացվել «Հիդայէթ» ժողովին. «Ինչպէս յայտնի է, մեր մահմեդականներիս մէջ տարածված սովորութիւն է հարկ եղած յարգանքով չը վերաբերվել դէպի մեր սրբազան վայրերը, աղօթատները: Այսպէս, մեր Թաղի մահմեդականները՝ չը գիտենք, շնորհիւ դէպի իրանց սեպհական իրաւունքները ունեցած անուշադիր վարմունքի՞, թէ գուցէ հէնց այն պատճառով, որ ստիպված են անուշադիր լինել դէպի իրանց այդ իրաւունքները, թոյլ են տալիս, որ ոչ միայն իրանց ուրիշ ազգային հարցերի, այլ և սեպհական աղօթատան վերաբերմամբ կատարվեն զանազան անպատեհութիւններ, որոնց դատապարտում է և՛ շարիաթը և քաղաքային օրէնքը: Նրանք չեն աշխատում, չեն ձեռնարկում դրա դէմ դարմանի: Իբրև ապացոյց այն, որ մեր Թաղա մէջլիզը երեք կողմից շրջապատված է չորս գինետներով: Այդ գինետների առաջինը գտնըվում է Գիմնազիչսկի և Մարինսկի փողոցների անկիւնում, Դիլչարովի և Հիւսէյնովի տներում, երկրորդը՝ Կարանտիննի և Թաթարսկի փողոցների անկիւնում գտնվող տան մէջ, երրորդը՝ Թաթարսկի փողոցում, Ղուրբան Իմամ Մուհամէդ օղլու տանը, չորրորդը՝ Արմենիանսկի փողոցի անկիւնում Թաղի ախունդի տան առաջն է: Յիշեալ գինետները՝ ոչ միայն շարիաթի, այլ և քաղաքային օրէնքի տրամադրած կանոնով պէտք է սրբազան վայրերից որոշ հեռաւորութեան վրա լինեն. բայց նրանք այնքան մօտ են, որ թէ մզկիթի յարգանքին և թէ Թաղի մահմեդականների պատուին վիրաւորանք են հասցնում: Այդ գինետները հաստատվել են գինետուն անուան տակ, ինչպէս առհասարակ, բայց այնտեղ կատարվում են զանազան տգեղ արարքներ. նրանք դառնում են չարագործութեան աղբիւրներ. միշտ այլևայլ անախորժ դէպքերով խանգարում են Թաղի բնակչութեան հանգիստն ու խաղաղութիւնը: Ահա ինչու համար խնդրում ենք ժողովի անդամներից, որ, նկատի ունենալով մզկիթի յարգանքը և ժողովրդի հանգստութիւնը, հարկաւոր միջոցները ձեռք առնեն կամ փակելու այդ հաստատութիւնները և կամ տեղափոխելու այլուր»:

—

Անմէդ բէգ Ալայեվը հեռագրում է «Իրշադ»-ին ու Զ. Ա. Թաղիեվին հետևեալը Գանձակից. «Գանձակ գալով՝ տեսայ այն հոգևոր նորակառոյց դպրոցը, սեմինարիան, որ շինվեց ձեր և ուրիշ առաջաւոր մարդկանց ջանքերի շնորհիւ: Ես չը գիտեմ, թէ ինչպէս արտայայտեմ իմ շնորհակալութիւնը ձեզ այն բանի համար, որ երեք հարիւր աշակերտներից աւելի սովորում են իրանց մայրենի լեզուով այդ ուսումնարանում: Կարգն ու կանոնը սեմինարիայում [illegible] գեղեցիկ է և ու[illegible]—զարգացութեան սէրն ու փութաջանութիւնն իրանց դասերի համար—չափազանց գովելի: Դրա համար, երբ ես մտայ սեմինարիայի դռնից ներս, աշակերտները դէպի ձեզ տածած իրանց երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեցին ինձ և ասացին, որ աղօթում են բարձրեալն Աստուծոյ ձեր կեանքի երկարութեան, ձեր՝ որ այնքան անձնուիրութեամբ աշխատում էք առհասարակ մահմեդականութեան և մասնաւորապէս յիշեալ սեմինարիայի օգտին»:

—

Դեկտեմբերի 25-ի գիշերը Թուրքերի «Համլէթ» սիրողների խումբը, Բալախանում, կրուժոկի դահլիճում, Թուրք հանդիսատեսների համար ներկայացրել է Վէզիրովի «Եաղըշ տան չըխդում, եաղմուրա դիւշտում» կոմեդիան:

—

Րոստովից (Դոնի վրա) հեռագրում են «Русь» և «Рѣчь» թերթերին «Քաղաքս է տեղափոխած Վարշաւայի պօլիտեխնիկումը»:

—

Տպարանային և գրավաճառման տեսուչ պ. Վալդենբերգի հրատարակած «Մամուլի տեղեկատու գրքոյկ»-ի մէջ առաջ է բերված հետևեալ հետաքրքրական տեղեկութիւնները, որոնք վերաբերում են մամուլի դրութեան: Անցեալ տարվայ նոյեմբեր ամսի վերջից (պարբերական հրատարակութիւնների մասին ժամանակաւոր կանոններ հրատարակելու ժամանակից) մինչև այս տարվայ նոյեմբերի 1-ը, այսինքն 11 ամսվայ ընթացքում, Պետերբուրգում հրատարակվել են 653 վկայականներ՝ պարբերական հրատարակութիւնների համար, 67 վկայականներ դեռ չեն հաստատված: Այդ ամբողջ ժամանակամիջոցում գրաւված են 126 պարբերական հրատարակութիւններ, որոնցից 57-ը դադարեցնում են ժամանակաւորապէս, իսկ 12-ը՝ ընդմիշտ: Սկզբում լոյս տեսնող պարբերական հրատարակութիւններից դադարեցված է 25-ը, իսկ 10-ը՝ ընդմիշտ:

(«Русь»)

—

Դեկտեմբերի 17-ին կոմս Վիտտէի քարտուղար Կաժըր-ինկէր Զէյմից գողացված են մի քանի շատ կարևոր արձանագրութիւններ և փաստաթղթեր, որոնք վերաբերում են պորտսմուտեան դաշնագրութեան:

(«Р. С.»)

—

«Русь» լրագիրը հաղորդում է, որ հիւսիսարևմտեան երկրի մի քանի նահանգներում, ինչպէս և Պոտոլի և Կիէվի նահանգներում կազմվել է մի շարք հրէական կոմիտէններ, որոնք որոշել են միանալ գիւղացիական կազմակերպութիւնների հետ:

—

«Придн. Край» լրագիրը հաղորդում է. «Բացատրված է, որ ֆին ծնվածները, ինչպէս և ուսանողատակները, պէտք է ցուցակագրվեն ընտրողների թւում»:

—

Կուրոպատկինի գրքի հրատարակութիւնը արգելելուց յետոյ, նոյն վիճակին է ենթարկվել և գեն. Բատիանովի բրօշիւրը, որ պարունակում է իր մէջ մանջուրական զօրքերի գլխաւոր հրամանատարի 4 նամակները ուղղված գեն. Լինևիչին, որոնք իրանց բովանդակութեամբ վերաբերում են զօրքերի մէջ տիրող յուզմունքներին: Այդ բրօշիւրը բաւականին տարածվում է ազգաբնակութեան մէջ, չը նայելով ցենզուրական արգելքներին:

—

Ցարսկոյէ Սելոյի քաղաքային ընտրողական ցուցակների մէջ մտցված են հետախոյզ ոստիկանական պաշտօնեաներ: Աջակողմեանների բլոկը յոյս ունի, որ ընտրողների այդ պրօֆեսիոնալ խմբակը Ցարսկոյէ Սելոյում գերակշռութիւն կը տայ յօգուտ իրանց թեկնածութեան:

—

Մոսկվայի քաղաքապետ Րէյնբոտը երկրորդ անգամն է դիմել Մոսկվայի համալսարանի ռեկտոր Մանուիլովին խնդրելով հաղորդել իրան համալսարանի ուսանողական կենտրոնական մարմնի անդամ ուսանողների անուններն ու ազգանունները: Նախատեսելով առաջուց, որ մերժումն կըստանայ, Րէյնբոտը խնդրել է գոնէ յայտնել այն ուսանողների անունները, որոնք կենտրոնական օրգանի կողմից իբրև ներկայացուցիչներ դիմել են ռեկտորին և իր օգնականին: Մանուիլովը պատասխանել է, որ նա հնարաւոր չէ համարում կատարել այդ խնդիրքը:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Գործակատարական ընթերցարանն իր նպատակին չի ծառայում. դրա պատճառը՝ նախ գործակատարների անտարբերութիւնն է և ապա դիրամատչելի թերթերի անկանոն ստացվելը. «Մաթաբալա», «Հայելի», «Մուրճ», «Ձայն», «Բուզելնիկ» կանոնաւոր չեն ստացվում. իսկ Րուսերէն լեզուով քիչ թէ շատ ազատամիտ թերթերը խուսափում են ընթերցարանից: Բացի այդ՝ միւս թերթերը, որոնք պէտք է առաւօտեան ընթերցարանումը լինեն, շնորհիւ ընթերցարանի գլխաւորների անտարբերութեան միայն երեկոյեան են ընթերցարան ընկնում: Մի խօսքով անկանոնութիւնը կատարեալ կը դառնայ, եթէ դրանց հետ միացնենք և կէս սենեակի ղալմաղալներն ու բարձր խօսակցութեան խանգարիչ ձայները:—Եղանակը համեմատաբար լաւ է անցնում. դեռ կանոնաւոր ձիւն չի եկել. արեգակն ամեն օր իր ճառագայթներով կենդանութիւն է տալիս քաղաքին. միայն սաստիկ ցեխը խանգարում է անց ու դարձը»:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

27 դեկտեմբերի

ՍԱՆՖՐԱՆՑԻՍԿՕ, 27 դեկտեմբերի: Կալիֆօրնիայի նահանգապետը նահանգի օրէնսդրական ժողովին մի նամակ է ուղղել, որով յայտնում է, որ Րուզվէլտը և արևմտեան պետութիւնները անընդունակ են հասկանալ մի կողմից եապօնացիների և չինացիների, միւս կողմից կովկասեան ժողովուրդների միջև տեղի ունեցող ցեղական թշնամութիւնները և անվերջ վէճերը: Կալիֆօրնիան իրան է թողնում օրէնսդրական կարգով կարգաւորել դպրոցական հարցը, ինչպէս որ յարմար կը գտնի:

ԼՕՆԴՕՆ, 27 դեկտեմբերի: Լաւատեղեակ աղբիւրից տեղեկութիւն քաղելով «Ստանդարդը» հաղորդում է, որ բանակցութիւնների ժամանակ Եապօնիան և Րուսաստանը լաւ են իրանց բոլոր ջանքերը՝ համաձայնութիւն կապելու: Անգլօ-ռուսական յարաբերութիւնների վերաբերմամբ լրագիրը ասում է, որ նրանք ներկայումս այնպիսի բնաւորութիւն են կրում, որ համաձայնութեան կնքելը չէ կարող յապաղել: Պարսկաստանում քաղաքականութիւն վարելու առիթով համաձայնութիւն է կապվել այն բոլոր հարցերի վերաբերմամբ, որոնցից մի քանիսը թիւրիմացութիւնների աղբիւր էին ծառայում առաջ:

ԲԵԼՕՍՏՕԿ, 27 դեկտեմբերի: Գեներալ-նահանգապետը կարգադրել է, որ Մշունգի առիթով բանտից արձակեն աղմինիստրատիվ կարգով բանտարկվածներից կէսին 17 հոգու:

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 27 դեկտեմբերի: Բանտի պահապան զինւորը սպանել է բանտարկեալներից մէկին, չը հանդուրժելով վերջինի հայհոյանքին:

28 դեկտեմբերի

ՊԵԿԻՆ, 27 դեկտեմբերի: Պրինց Տզաիչէի և Եուանշիկայի յատուկ կոմիսարները վերադառնալով Մանջուրիայից կայսրին զեկուցել են Մանջուրիայում կատարած իրանց ուղևորութեան հետևանքների մասին: Ի միջի այլոց նրանք յամառութեամբ խորհուրդ են տուել յետ վերցնել ռուսներին և եապօնացիներին զիջած երկաթուղին, ինչպէս և լեռնային և այլ դաշնագրերը, որ տրված են նրանց Մանջուրիայի երեք նահանգներում:

ԿԱՏԻԿՍ, 27 դեկտեմբերի: Երէկ 5 զրահանաւեր, փոխ-ծովակալ Մաջի հրամանատարութեամբ, մեկնեցին Տանժէր:

ԼՕՆԴՕՆ, 27 դեկտեմբերի: «Թայմս»—Տօկիօյից ստացած տեղեկութիւնների համաձայն, կառավարութիւնը մտադիր է պարլամենտ մտցնել պետական նախահաշիւը, որի բալանսը որոշված է 611 միլ. իէն: Ապագայ տարվայ բիւջէթից անկախ որոշված կը լինի Սախալինի և Մանջուրիայի վրա գործադրվելիք ծախսը: Կառավարութիւնը կարծում է, որ այդ ծախսերը շուտով կը ծածկվեն տեղական եկամուտներով, շնորհիւ Մանջուրիայի երկաթուղու արագ զարգացման, Եալուայի վրա հաստատվող նաւագնացութեան և ձկնորսութեան: Նախատեսվում է, որ շուտով կը կըճատվեն Կորէայի վրա գործադըրվող ծախսերը, որովհետև այդ նահանգում երկաթուղին զգալի կերպով զարգանում է, իսկ ներքին և արտաքին առևտուրը օրէցօր աճում:

ՄՕՍԿՎԱ, 27 դեկտեմբերի: Դեկտեմբերի 30-ին այստեղ գումարվելու է հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան քաղաքային խորհրդի և կենտրոնական կոմիտէի միացեալ նիստը մասնանշելու այն անձանց, որոնք պէտք է դաշնակցութեան կողմից Պետական Դումայի համար թեկնածուներ առաջադրվեն:

ԳՄՈՒՆԴԵՆ, 27 դեկտեմբերի: Վախճանվեց Հաննովերի Թագուհին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 դեկտեմբերի: Պետերբուրգի նահանգապետը մի հրաման է հրատարակել, որի մէջ, մասնանշելով նախընտրական ժամանակի մօտենալը և ընդհանրապէս տիրող հանգստութիւնը, հաստատում է կադէտների ժողովների արգելման կարգադրութիւնը և որով թոյլատրում է ժողովներ գումարել մարտի 4-ի օրէնքի համաձայն միայն:—Օխտինսկու րայոնի հոկտեմբերականների ժողովում ներկայ էին մեծաւ մասամբ տեղական բանուորները: Միլիուտին, Նիկանօրով և Բօբրիշչէվ-Պուշկինը պարզեցին հոկտեմբերականների ծրագիրը և հերքեցին այն լուրերը, որ երբ կառավարութիւնը հովանաւորութիւն է ցոյց տալիս հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան, և մատնանշեցին, որ կադէտները չեն կարող իրանց միապետական կուսակցութիւն համարել Վըբորգի կոչից յետոյ, որը հանդիսանում է մի բողոք Դումայի արձակման մասին տրված անուանական ուկազում պարզ արտայայտված Միապետի կամքի դէմ: Առարկեցին կադէտները, որոնց ճառերը յաճախ ընդհատվում էին տհաճ բացականչութիւններով:

ՎԱՐՇԱՎԱ, 27 դեկտեմբերի: Մարիաւիտների լրագիրը հաղորդում է, որ կաթոլիկական եկեղեցուց մարիաւիտների հոգևորականութեանը բաժանելու առիթով հրատարակված պապի հրովարտակը կարդացվել է այդ աղանդի բոլոր եկեղեցիներում, որով մերժվել է շնորհաւորական օրհներգը՝ աղանդը հոռմէական ստրկութիւնից ազատելու և նրան ազատութիւն շնորհելու համար:

ՏՕԿԻՕ, 27 դեկտեմբերի: Պարլամենտում կան հետևեալ կուսակցութիւնները. Սահմանադիր «Սէյիկայ»—153 պատգամաւորով, առաջադիմական «Սեմպադօ»—94 պատգամաւորով, «Դայդօ»—66, հին «Սէյկօկլուբ»—35, անկուսակցական—31: Մամուլը յոյս ունի, որ բոլոր վիճելի հարցերը կը կարգաւորվեն: Հանրապատը լոյս են տեսնում միօրինակ յօդուածներ: «Ասահին» ասում է, որ ռուսաց մամուլը պէտք է զգուշանայ կըրքոտութիւնից: Տօկիօյում կայանալիք համաշխարհային ցուցահանդէսի համար յատկացըրված է 10 միլիոն իէն, որը ծածկվելու է 7 տարվայ ընթացքում:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.:
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներարգային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժու. հ.:
Զ. Ի. ԲԱՐԱՆՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ի. Կ. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.:
Գ. Ե. Գուրչինով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.:
Վճարը 50 կ.: չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

Գիմնազիայի բարձր դասարանի մի աշակերտ ցանկանում է դասեր ունենալ. մաթեմատիկայից կարող է պատրաստել մինչև 7-րդ դասատուն: Հասցէն՝ Водоподъемная, 9, близъ Коммерч. училища. (ու. շ. կ.) 1—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8.
(Ե. հ. շ.) 9—100

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը: Երևանեան հրապարակ, տ. Գուրգէնովի № 7. պօդեզ նոտար Միքրովի:
(Ե.հ.շ.) 91—100

Երկրագործութեան մինիստրութեան և պետական կալուածների գործակալ
Մ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆԸ
(Թիֆլիս, Սերգեևսկի փողոց, տ. № 11).



Խաղողի և մրգատու այգիները բուժելու համար առաջարկում է անգլիական լաւագոյն պղնձի արջասպ, զտած ծծումբ, սրսկիչ «Վէրմօրէլներ», փուքսեր և այգու այլ պարագաներ, ջրհան, քամիչներ, սեկատօրներ, դանակներ և այլն:
Ընդունվում են պատուէրներ պտղատու ծառերի սեփական բուծարանից, Սկրա կայարանի մօտ: (հ.) 2—12

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Ուրբաթ, դեկտեմբերի 29-ին
Բարեհաճ մասնակցութեամբ տ. ՍԻՐԱՆՈՅՇԻ, Վանչերի և Դրամատիկ ընկերութեան խմբի դերասանների
կը ներկայացվի
ԲԱՂԴԱՍԱՐ ԱՂԲԱՐ
Կօմէդիան 3 գործ. Պարոնեանի, փոխադր. Սարգսարեանի և Վրոյրի. տ. Անոյշի դերը կը կատարէ տ. ՍԻՐԱՆՈՅՇ, Բաղդասարի դերը կը կատարէ Ա. ՎՐՈՅՐ
Ախզամիջոցներին կը նուագէ երգիչ Ջիւանին իր խմբով
Տեղերի գինը 2 ր. 50 կոպէկից մինչև 50 կ.:
Տոմսակ գնողները կլուբի մուտքի համար առանձին փող չեն վճարում:
(ու) 1—1

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, ամսիս 31-ին, ցերեկվայ 12 ժամին, պատարագից յետոյ՝ Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցում լինելու է ծխականների չորրորդ և վերջին ժողով՝ նոր երէցփոխի ընտրութիւն կատարելու, որի համար սրանով հրաւիրվում են նոյն եկեղեցու յարգելի երկսեռ ծխականները՝ ժողովին մասնակցելու:
Թիֆլիսի հայոց եկեղեցիների բ. մ. գործակալ՝
Ղևոնդ քհ. Մամիկոնեանց
(ու. շ.) 1—2

Ղարաբաղի վիճակային կոնսիստորիան սրանով յայտնում է ի գիտութիւն ամենի, որ 1907 թւի յունվարի 19 ին, նոյն կոնսիստորիայի ատենում նշանակված է Գանձասարի Վանքի երկանաքարի (Ջրաղացի քարի) հանքի կապալակարկութիւնը, երեք տարի ժամանակով, իսկ կրկնաառակարկութիւնը 22-ին: Ցանկացողները կարող են ծանօթանալ պայմանի հետ կոնսիստորիայի դիւանատանում:
Անդամ կոնսիստորիայի՝
Եղիշէ քհ. Թարխանեանց
1—2

ԾԱԽՎՈՒՄ Է
ԱՆԹՐԱՑԻՏ
60 պուդ կամ աւելի գնողները Թիֆլիսում ճանապարհի ծախս չեն վճարում:
Նոյն տեղ ծախվում է նաև ընտիր
ՉՈՐ ՓԱՅՏ
ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ: Հասցէն՝ Елизаветинская ул. № 127, երկաթուղային վարչութեան կից:
(ու. շ. կ.) 1—5

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Գ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ եւ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ.
Տելեֆոն № 1087
Սօլօլակ, Լերմոնտօվսկայա փող., 16.
(ս. օ.) 79—150

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8: Կանանց համար 12—1 ժամը:
Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Պասկեվիչի փողոցների, № 33/15:
(ս. օ.) 81—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամեն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը: Կուկիա, Սեմեոնօվսկի փողոց № 16:
(ու. կ. չ.) 2—20

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւնների: Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առաւ. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճավաձէի № 36
43—100

Նոյեմբեր ամսի 20-ին Բագուի կայարանում գտնված է 4 տարեկան մի
Աղջիկ երեխայ
Դիմել՝ Балаханы Московское-Кавказское О-во Механикъ Мастерская слесарю Шахатунову. հ. ու. 2—2

«ԳՈՒՏԵՆԲԵՐԳ»
Գրավաճառանոցի հրատարակութիւն
Լոյս տեսաւ Սեդրակ Մանդինեանի կազմած
начальная русская
христоматія
для армянъ
դասաւանդութեան բացատրութիւններով
1. գրքոյկ
Գրքոյկը նոր ծրագրի համեմատ նշանակված է ծխական ուսումնարանների 3-րդ բաժանմունքի համար, բայց առայժմ կարող է գործածվել նաև 4-րդ բաժանմունքում կամ թեմակ. դպրոցի առաջին դասարանում:
4—10

Ղափանի Բէխ և ԳԻՒԴԻՒՄ գիւղերի նոր կազմվելիք գրադարանի օգտին խնդրում ենք օտարութեան մէջ գտնըվող ղափանցի հայ բարերարներին, հեղինակներին և հրատարակչական ընկերութիւններին չը զլանալ իրանց նուէրները ուղարկելու հետևեալ հասցէով՝ Катарскіе заводы учителю Степану М. Парсаданяну.
2—5

Մի չքաւոր ընտանիք,
որը բաղկացած է 7 հոգուց և ապրուստի միջոցներից զուրկ է, խնդրում է բարերարներին օգնել իրան: Նուէրները ուղարկել հետևեալ հասցէով. Тифлисъ, Михайловскій пр., № 88. տիկ. Սալամբէգեանին:
3—3

Գէորգեան ճեմարանի
Ա. լսարանի
ՄԻ ՈՒՍԱՆՈՂ
(մի տարի ուսուցչութիւն արած) ուսուցչութեան պաշտօն է փնտռում հայոց դպրոցներում: Դիմել՝ Эчміадзинъ, Академія Потеянцу.
5 5

ՄԻ ՀԱՅ ԳՐԱԳԷՏ,
44 տարեկան, մի քանի լեզուներով խօսող, որոնում է գործակատարի պաշտօն, ամեն տեսակ առևտրական տեղերում և գործարաններում: Կարող է լինել և ծառայ քոմիսիոնէրներում, խմբագրատներում և կրթական հաստատութիւնների մէջ: Հարցնել՝ Նաւթլուխ, Նաքէժդինսկի ապաստանարան, Գարեգին Տէր-Աւետիքեանին:
3—3

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կօդեակսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կօդեակսկի փողոցից № 2.
(ս. օ.) 300 300

ԲԱԶՄԱՎԷՊ

Հանդէս ս. Ղազարու Հայկական ճեմարանի իր 64-րդ տարւոյն մէջ, հզօրագոյն թափով պիտի մասնակցի ազգային գրական վերածնութեան: Կաշխատակցին հայ և եւրոպացի ճեմականներ: Ազգային-բանասիրական բաժնէն զատ կը ներկայացնէ բանաստ. վէպեր, բնախօսական հատուածներ, տեղեկագիրներ՝ ազգային նորութեանց վրայ: Իր նպատակն է բարձրացնել ազգին մտաւորը՝ երբ Մարդ և երբ Հայ՝ ըլլալ միութեան կէտ մը ռուսահայ և տաճկահայ, ազգային և Եւրոպական գրականութեանց միջև. զարգացնել մասնագիտութիւնը, առանց ուրանալու ժողովուրդը: Տարեկան գին՝ 4 րուբլի: Դիմել Rédaction de la Revue «Bazmaoeb» Venise, (Jtalie) S. Lazare:
(Ե. ու.) 8—10

Ի ՎԱՃԱՌ
ԲԱՐԳ. ՅՈՎՀ. ԱՐԱԲԱՋԵԱՆ
ԼԾԻ ՏԱԿ
ՎԷՊ
ԲՈՒԼՂԱՐՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ
Ա. և Բ. ՄԱՍ.
ԳԻՆԸ 1 ՌՈՒԲ.
ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ
ԹԻՖԼԻՍ «ԳՈՒՏԵՆԲԵՐԳ» ԳՐԱՎԱՃ.
ս. օ. 7—10

Արդէն թարգմանել եմ

1) Ստ. լը Շարի «Ледоходъ» դրամա 5 գործ.
2) Վասիլևվի, «Что такое отечество».
3) Օ. Միրբօի, «Ժան Ռուլ», դրամա 5 գործ.
4) Ան.-սկի, «Семидесятникъ», պիէս 1 գործ.

Ներկայացման, գնելու կամ հրատարակելու համար դիմել՝ Анапа, Щводу.
Մարտիրոս Տէրոյեան Շւոտ
4—5

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1907 Թ.
ԱՇԽԱՏԱՆՔ
Ժողովրդական, տնտեսական, գիւղացիական
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

Նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ, ինչ որ 1906 թւին, աշխատակիցների ուժեղացրած կազմով. ամեն համարում Ստորա-կէտի շաբաթական Ֆելիէտօնով

«Աշխատանքը» նուիրված է լինելու հայ գիւղացիութեան և նրա միջից դուրս եկած պրօլետարիատի շահերին և կարիքներին:

«Աշխատանքը» առանձին ուշադրութիւն է դարձնելու մեր գաւառի հասարակական և տնտեսական կեանքի վրա:

1907 թւի տարեկան բաժանորդներին «Աշխատանքը» տալու է ձրի, բացի 50 համար թերթից, բաղկացած 800 երեսից, մեծադիր երեսներից, հետևեալ չորս գրքերը.

Տարին 4 ր.

1. «Ժողովուրդը և հողը» տնտեսական-հասարակական ուսումնասիրութիւն:
2. «Ամենալաւ վարը» մատչելի գիւղատնտեսական ցուցմունքներ:
3. «Թանկագին բոյսերի թշնամիները եւ նրանց դէմ կռւելու միջոցները», հանրամատչելի գիտական ուսումնասիրութիւն այգեգործների, պարտիզպանների և բամբակագործների համար:
4. «Գիւղական նամակներ» զրոյցներ ժամանակակից քաղաքական-տնտեսական-հասարակական հարցերի մասին:

Բացի դա բաժանորդները ձրի ստանալու են՝
Երկու բազմագոյն, շքեղ նկարներ (14×8 վերշ.)
I «Կարկուտից յետոյ» (կուղարկվի յունվարի 15-ին)
II «Գալիս են» (կուղարկվի սեպտ. 15-ին)

ԲԱԺՆԵԳԻՆԸ

Գրքերի և նկարների հետ միասին ճանապարհածախքով

Ռուսաստանի համար		Արտասահմանի համար	
Տարին	4 ր.	Տարին	18 ֆրանկ.
Կէս տարին	2 ր. 50 կ.	Կէս տարին	10 »

Հասցէն՝ Тифлисъ, редакцію журн. «Ашхатанкъ» Бебутовская № 56.
7—0 Խմբագիր-հրատարակիչ՝ Ա. Աթանասեան

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
1907 Թ.
ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
Գրական, քաղաքական, հասարակական, շաբաթաթերթ

որ նուիրուելու է մասնաւորապէս թիւրքահայկական հարցի լուսաբանութեանը, ծանօթացնելու է իր ընթերցողներին հայ և թիւրք կեանքի քաղաքական, հասարակական, գրական ու գեղարուեստական զանազան երևոյթների հետ և ձգտելու է հայ-թիւրքական համերաշխ գործակցութեան

Յունվարի 1-ից № 1-ը լոյս կը տեսնէ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

	Տարեկան	Վեց ամսուան
Թիֆլիս	4 ր. —	2 ր. 25 կ.
Գաւառ	4 ր. 50 կ.	2 ր. 50 կ.
Ամերիկա	3 դոլ.	1,75 դոլ.
Արտասահման	15 ֆր.	8 ֆր.

Խմբագրութեան հասցէն՝—Тифлисъ, редакція «Еркри Дзайнъ», Грибоѣдовская, № 16, д. Зубалова, կամ Tiflis, rédaction de l'«Erkri Dzaïn», Griboedovskaya, № 16, maison Zoubaloff.
Թիֆլիսում կարելի է բաժանորդագրուել և «Գուտտենբերգ» գրավաճառանոցում:

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Հայոց Ազգագրական ընկերութեան հրատարակութեամբ լոյս տեսնող
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
Պատկերազարդ եռամսեայ հրատարակութեան
1907 թ. բաժանորդագրութիւն

ԾՐԱԳԻՐ 1. Տեղագրութիւն. 2. Պատմական տեսութիւն. 3. Մարդաբանական հետազօտութիւններ. 4. Վիճակագրական տեղեկութիւններ. 5. Հնագիտական հետազօտութիւններ. 6. Ազգագրական, ցեղագրական և հասարակագիտական հետազօտութիւններ. 7. Տնայնագործութեան, պարապմունքի և գիւղացիների տնտեսական դրութեան մասին ուսումնասիրութիւններ. 8. Ժողովրդական հաւատք. 9. Սովորութական իրաւունք. 10. Բանաւոր գրականութիւն. 11. Ժողովրդական երաժշտութիւն. 12. Մատենախօսութիւն և 13. Յայտարարութիւններ:
Իւրաքանչիւր գիրքը բաղկանում է 10—14 տպագրական թերթից:
Աշխատակիցները անպայման վարձատրվում են:
Առաջին գիրքը անշուշտ լոյս կը տեսնի յունվարիս կէսին

Բաժանորդագինն է { Ռուսաստան. տարեկան 5 ր. կէս տարին 3 ր.:
Արտասահման » 13 ֆր. » 7 ֆր.

Թիֆլիսում բաժանորդ կարելի է գրվել խմբագրատանը Саперная № 5. Դիմել՝ Въ редакцію журнала Азгаграканъ Андесъ. Тифлисъ կամ Rédaction de la Revue Azgagracan Handess.
Ազգագրական Հանդէսի I—XIV գրքերը վաճառվում են խմբագրատանը 21 ր. մի գիրքը՝ 1 ր. 50 կ. ճանապարհածախսով:
1906 թ. տարեկան [illegible] բաժանորդները կը ստանան այս 1907 թ. առաջին կիսամեակի գրքերը, որովհետև դեֆիցիտը մեծ լինելու պատճառով հնարաւոր չեղաւ այդ 1906 թ. երկրորդ կիսամեակի գրքերը հրատարակելու. 7—7

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатная, Типографскаго Т—ва «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5